Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Բնական միջավայրի և սոցիալ-տնտեսական վիճակի վրա միջազգային ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը. ուսումնասիրություններ միջազգային և հայաստանյան փորձից

Սոֆյա Մանուկյան

Մայիս 2020թ.

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բովանդակություն

Նախաբան 4

Էներգետիկ ծրագրեր, բնապահպանական խնդիրներ և աղքատություն. ներդրումների հակառակ կողմը 6

Միջազգային իրավիճակը 6

Իրավիճակը Հայաստանում 9

Ի՞նչ կապ ունեն միջազգային ֆինանսական ինստիտուտները բնապահպանական խնդիրների և աղքատության հետ 12

Համաշխարհային բանկ և Միջազգային ֆինանսական կորպորացիա 12

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ 16

Եվրոպական ներդրումային բանկ 19

Գերմանական զարգացման բանկ 20

Ասիական ֆինանսական ինստիտուտներ 21

Ռուսական ֆինանսական ինստիտուտներ 22

Ո՞ր իրավունքներ են խախտվում ֆինանսական ինստիտուտների անպատասխանատու ներդրումների արդյունքում 24

Քաղաքականության մշակման մեխանիզմներ ի նպաստ պետությանն ու բնությանը 28

Հղումներ 33

Նախաբան

Տարիներ ի վեր տնտեսական աճը և զարգացումը եղել են աշխարհի գրեթե բոլոր երկրների առաջնային նպատակը՝ որպես համընդհանուր բարեկեցության, աղքատության հաղթահարման և պետության բարօրության գրավական: Ու չնայած 1980-ականներից ի վեր համաշխարհային տնտեսությունն աճել է 380 տոկոսով, աղքատ ապրողների թիվն, այսինքն նրանք, ովքեր օրական 5 դոլարից քիչ գումարով են ապրում, այնուամենայնիվ, նույնպես աճել է 1.1 միլիարդով: (Հիքլ, 2015) Այսինքն տնտեսական աճի մոդելն այնքան էլ չի աշխատում աղքատության նվազեցման տեսանկյունից: Սակայն աճի մոդելը չաշխատող տարբերակ է նաև այն պատճառով, որ ինչպես գիտնականներն են հաշվարկում, ներկայիս համաշխարհային աճի և սպառման տեմպերով տարեկան 50 տոկոսով ավելի ենք սպառում, քան թույլատրելի է մեր մոլորակի մասշտաբներով: Ընդ որում, սպառման մեծ մասն աշխարհի արդեն իսկ զարգացած երկրներին է բաժին ընկնում: Ուստի որոշ տնտեսագետներ խորհուրդ են տալիս մի կողմ դնել տնտեսական աճի ու զարգացման մոդելն ու նոր մոդելի շուրջ մտորել: (Հիքլ, 2015)

Չնայած այս խորհրուրդներին ու կլիմայագետների կանխատեսումներին՝ հարուստ պետությունները, կորպորացիաներն ու խոշոր ֆինանսական հաստատությունները, ինչպես օրինակ Համաշխարհային բանկն ու իր Միջազգային ֆինանսական կորպորացիան, եվրոպական, ռուսական, ասիական և զարգացման այլ բանկերը, շարունակում են տարբեր երկրներում ներդրումներ անել այնպիսի ծրագրերում, հատկապես էներգետիկ ոլորտում, որոնց հետևանքները ոչ միայն համընդհանուր բարօրության, այլև բնապահպանության տեսանկյունից խնդրահարույց են:

Ուստի այս հետազոտության նպատակն է՝

- *ուսումնասիրել ֆինանսական ինստիտուտների էներգետիկ ներդրումների հետևանքով բնությանը հասցված վնասները,*
- *ուսումնասիրել նման ներդրումների հետևանքները տեղացիների սոցիալ-տնտեսական վիճակի վրա՝ այս կերպ նաև հասկանալով հակաբնապահպանական ներդրումների կապը բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի հետ միջազգային և հայաստանյան օրինակների հիման վրա,*
- *ներկայացնել այս ներդրումների հետևանքների հակասությունները մարդու իրավունքների տեսանկյունից,*
- *առաջարկել քաղաքականությունների մշակման տարբերակներ ինչպես պետությանն, այնպես էլ ֆինանսական ինստիտուտներին, որոնք չեն հակասի պետության՝ բնապահպանական, սոցիալ-տնտեսական և իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած պարտավորությունների իրագործմանը:*

Նման ուսումնասիրությունը հատկապես կարևոր է ինչպես միջազգային մարտահրավերների՝ կլիմայի փոփոխության մեղման և աղքատության վերացման նպատակով համապատասխան քայլեր իրագործելու տեսանկյունից, այնպես էլ անցումային փուլում գտնվող հայաստանյան

տնտեսական և քաղաքական դաշտում համապատասխան քաղաքականություններ մշակելու նպատակով:

Վերոնշյալ հարցերին պատասխանելու և քայլեր առաջարկելու նպատակով այս աշխատանքում հավաքագրվել և ուսումնասիրվել են ֆինանսական ինստիտուտների միջազգային և հայաստանյան ներդրումային օրինակներ, ֆինանսական ինստիտուտների, ինչպես նաև միջազգային բնապահպանական և իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներ, ներդրումային ծրագրերի նկարագրեր և ֆինանսական ինստիտուտների՝ ծրագրերի ֆինանսավորման չափանիշներ, հետաքննող լրագրողների հոդվածներ, տեղական և միջազգային մեդիաների լուսաբանումներ:

Էներգետիկ ծրագրեր, բնապահպանական խնդիրներ և աղքատություն. ներդրումների հակառակ կողմը

Միջազգային իրավիճակը

Համաձայն Համաշխարհային բանկի մի ուսումնասիրության՝ օրինակ մեծ հիդրոէներգետիկ ծրագրերից տեղահանվածների շարքերում տարբեր երկրներում ամենաշատը տուժում են արդեն իսկ ամենաաղքատ և հասարակության ամենախոցելի խմբերը: Օրինակ, Հնդկաստանում մոտ 100 զարգացման ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 1.6 միլիոն մարդ է տեղահանվել ու նրանց մոտ կեսը բնիկ ժողովուրդներ են: (ՎանՔլիֆ, 2016) Ընդ որում, բնիկների համայնքներն արդեն իսկ աղքատացած են, իսկ տեղահանման հետևանքնով նրանց վիճակն ավելի է վատթարանում: Սա այն բանի հետևանքն է, որ բնիկներն առավել մեծ կախվածություն ունեն բնությունից, օրինակ գետերից, ուստի մի կողմից տեղահանումը, մյուս կողմից էլ հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) հետևանքով գետերի ստորին հուների, ջրի քանակի ու որակի փոփոխությունը, ձկների թվի կրճատումը վերացնում են բնիկների համար անփոխարինելի գետային համակարգը: Մեծապես տուժում են նաև կանայք, ովքեր աշխատում են այգիներում, և ում համար դրանք եկամտի աղբյուր են հանդիսանում: (ՎանՔլիֆ, 2016) Սակայն անգամ փոքր հիդրոէլեկտրակայաններից գետային համակարգերը, էկոսիստեմն ու բնակիչները ևս տուժում են:

Ընդհանրապես առկա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀԷԿ-երի արդյունավետությունն այնքան էլ չի համապատասխանում այն խոստումներին, որոնք տրվում են դրանք ֆինանսավորողների ու նախագծողների կողմից, և որ նախագծային հաշվարկներն ու ազդեցության գնահատականները գրեթե միշտ անտեսում են կլիմայական փոփոխությունները, ահագնացող երաշտները: (Աշեր, 2018) Իսկ ամբարտակների ազդեցությունների ուսումնասիրման համար ստեղծված միջազգային հանձնաժողովը դեռևս 2000-ականներին հանդես էր եկել զեկույցով, որով եզրակացրել էր, որ տարբեր երկրներում մեծ ՀԷԿ-երի գործունեության համար հատկապես թանկ են վճարել տեղահանված բնակչությունը, գետերի ստորին հոսանքում բնակվողները, հարկատուները և իհարկե բնությունը, դե իսկ օգուտները հավասարապես չեն բաշխվել տեղի համայնքների և ՀԷԿ-երից շահույթ ստացողների միջև: (International Rivers, 2006) Հետազոտությունները խնդրահարույց են համարում նաև փոքր ՀԷԿ-երը, հաշվի առնելով այն, որ պետությունները ներդրողների համար բարենպաստ պայմաններ են ստեղծում փոքր ՀԷԿ-եր կառուցելու համար՝ համարելով դրանք վերարտադրվող էներգիայի աղբյուր, ինչպես նաև ոչ խիստ հսկողություն են սահմանում նախագծային փուլում՝ փոքր ՀԷԿ-երի ազդեցությունները ևս դիտարկելով փոքրամասշտաբ, ինչի հետևանքով գետերի վրա կառուցվում են բազմաթիվ փոքր ՀԷԿ-երի կասկադներ, ինչն իր հերթին առավել մասշտաբային բացասական հետևանքներ է ունենում ողջ էկոհամակարգի և բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի վրա: (Օփերման, 2018)

Բնական ռեսուրսների շահագործման և բնակչության աղքատացման փոխկապակցության մեկ այլ օրինակ է հանքերի շահագործումը: ՀԷԿ-երից առաջացած սոցիալ-տնտեսական խնդիրներին, որոնցից նշեցինք տեղահանումը, ոռոգման խնդիրները, ձկնապաշարների

նվազումը, հանքերի պարագայում ավելանում են նաև առողջապահական խնդիրները, դրա հետ կապված ծախսերը և ոչ միայն:

Աշխարհում հանքերի գործունեության հետևանքով բնակիչների տեղահանումների դեպքերը բազմաթիվ են, ընդ որում տեղահանումների պատճառը ոչ միայն հանք շահագործելու համար նախատեսված տարածքները բնակիչներից ազատելն է, ինչպես, օրինակ, Գվինեայում 2015-16թթ-երին ոսկի արդյունահանելու համար 380 ընտանիքի (Inclusive Development International, 2017) կամ Էկվադորում նույն տարիներին պղինձ արդյունահանելու համար 32 ընտանիքի (Հուի, 2019) և շատ այլ երկրներում բնակիչների բռնի տեղահանման պարագայում է:

Հանքերի շրջակա տարածքներից բնակիչները ստիպված են հեռանալ նաև, երբ ինչպես 2019թ-ին բրազիլական Բրումադինիու համայնքում փլուզված երկաթե հանքի պոչամբարը 270 մարդու մահվան, լուրջ բնապահպանական աղտոտման, գյուղատնտեսական հողերի կորստի և տնտեսական վնասների պատճառ դարձավ: Արդյունքում տեղացիներին տարհանեցին: (Էկոնյուզ, 2019)

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանքերի և ընդհանրապես համայնքներին մոտ գտնվող էներգետիկ ծրագրերի հետևանքով տեղի ունեցող կամավոր կամ էլ պարտադրված տեղահանումները «նոր աղքատություն» են ստեղծում: Այս տերմինը կիրառվում է մասնավորապես հակաբնապահպանական ծրագրերի արդյունքում տեղացիների սոցիալ-տնտեսական վիճակը վատթարացնող գործոնները նկարագրելու համար: Այդ գործոններն են՝ հողի կորուստը, աշխատանքի կորուստը, տան կորուստը և դրանց հետ առնչվող մշակութային ինքնության կորստի, սոցիալիզացիայի վերացման, մարգինալիզացման ռիսկերը, առողջապահական ռիսկերը, կրթության ընդհատումը, սոցիալական ծառայություններից օգտվելու անհասանելության ռիսկը, ինչպես նաև որոշակի խմբերի, ինչպես օրինակ կանանց, տարեցների, բնիկ ժողովուրդների առավել խոցելի լինելը: (Դաունինգ, 2002)

Ընդ որում, այս ուսումնասիրություններում որպես տեղահանում է բնորոշվում ոչ միայն բնակչության ֆիզիկական տեղահանումն իրենց տներից, այլև, օրինակ, հանքային գործունեության ընթացքում այնպիսի պայմանների ստեղծումը, որոնց արդյունքում մարդիկ կորցնում են մշակելի հողերը, գետերի կամ լճերի ձկնապաշարները, մշակութային վայրերը, որոնք որևէ եկամտով էին ապահովում բնակիչներին և այլն:

Մանրամասնելով վերոնշյալ յուրաքանչյուր գործոնի դերը աղքատացման ճանապարհին՝ ուսումնասիրությունը վերհանում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են բացի ուղղակի հողազրկումից նաև այնպիսի փոխհատուցումը, որով հնարավոր չէ գնել համարժեք հող և վարել տնտեսություն, կամ էլ հողի աղտոտումը, որը ևս թույլ չի տալիս տնտեսություն վարել: Այս գործոնի հետ էլ սերտ առնչվում է աշխատանքի կորուստը, որը հաճախ է անտեսվում հանքային ծրագրեր իրականացնողների, երբեմն էլ պետության կողմից: Ուսումնասիրությունն այս աշխատատեղերը չի համեմատում հանքերում ստեղծված աշխատատեղերի հետ՝ հաշվի առնելով հանքերի ոչ կենսակայուն և ժամանակավոր բնույթը: Ընդ որում ուսումնասիրությունն ընգծում է հատկապես կանանց տնտեսական վիճակի վատթարացումը, հաշվի առնելով

գյուղատնտեսության ոլորտում նրանց ներգրավվածությունն ու հանքերում նրանց բացակայությունը: (Դաունինգ, 2002) Ավստրալական մի քանի հանքային քաղաքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանքերում առավել մեծ թվով տղամարդկանց ներգրավման հետևանքով կանայք հիմնականում ծանրաբեռնվում են ընտանեկան գործերով, նվազում է հանրային կյանքում նրանց ներգրավվածությունը, առաջանում է ֆինանսական կախվածություն ամուսիններից, հանքային քաղաքների առօրյա կյանքը դառնում է ոչ բարենպաստ կանանց համար, ինչի հետևանքով վատթարանում է նաև նրանց հոգեկան առողջությունը: (Շարմա, 2010)

Կանադական հանքերում աշխատող բնիկների շրջանում մեկ այլ իրականացված ուսումնասիրություն ևս անդրադառնում է հոգեկան առողջության վատթարացմանը հանքերում աշխատող տղամարդկանց շրջանում, ինչն իր հերթին ավելի մասշտաբային հետևանքներ է ունենում: Ուսումնասիրությունը վատթարացող հոգեկան առողջությունը կապում է հանքերում ծանր աշխատանքային պայմանների հետ, որը, չնայած բարձր վարձատրության, այնուամենայնիվ, այնպիսի խնդիրների է հանգեցնում, ինչպիսիք են ալկոհոլիզմը, խաղամոլությունը, բռնությունը, մարմնավաճառությունը և դրա հետ ասոցացվող սեռավարակները: (Գիբսոն & Քլինք, 2005)

Անդրադառնալով հանքերի ազդեցությանը ֆիզիկական առողջության վրա և դրա տնտեսական հետևանքներին՝ Դաունինգի ուսումնասիրությունը նշում է նաև առողջապահական ռիսկերը որպես ոչ միայն հակաբնապահպանական ծրագրերի ինքնին բացասական հետևանք, այլև աղքատացմանը նպաստող գործոն՝ հաշվի առնելով ոչ միայն աղտոտված միջավայրից առողջությանը հասցվող վնասներն ու համապատասխան ծախսերը, այլ նաև աղտոտված միջավայրից տեղափոխվելու հետ ասոցացվող ծախսերն ու դրա հետևանքով ստեղծված սթրեսային միջավայրը: (Դաունինգ, 2002)

Առողջապահական խնդիրներից և ծախսերից խոսելիս պետք է նշել ինչպես հանքերից առաջացած առողջապահական խնդիրներն ընդհանուր բնակչության համար՝ շնչառական հիվանդություններ, աղտոտված հողից և ջրից օրգաններին հասցված վնասներ, սրտային հիվանդություններ և այլն, որոնք առաջանում են պայթյունների հետևանքով տարբեր մետաղական մասնիկների արտանետումներից, հանքերի պոչամբարների արտահոսքերից, քամու միջոցով հանքերից փոշու տարածման, նաև մետաղական մասնիկների՝ սննդի շղթա ներթափանցման միջոցով: Այնպես էլ կարևոր է նշել հանքերում աշխատողների առողջական խնդիրները՝ շարունակական վիբրացիաներից առաջացած մկանաոսրկային, լսողական և շնչառական խնդիրները, փոշուց առաջացած շնչառական խնդիրները, մասնավորապես, ածխի հանքերում աշխատողների շրջանում տարածված թոքաբորբը, որն այլ կերպ նաև անվանում են սև թոքերի հիվանդություն, աշխատանքային ոչ բարենպաստ պայմաններում մարմնական վնասվածքներ ստանալն, ընդհուպ մինչև կյանքի կորուստ, ինչպես նաև վերոնշյալ հոգեբանական խնդիրները, որոնք պայմանավորված են սթրեսային աշխատանքի բնույթով՝ հանգեցնելով ալկոհոլի օգտագործմանը, քնի խանգարմանը, դեպրեսիայի, որոնք էլ իրենց հերթին առաջացնում են հիշողության խնդիրներ, թուլացնում են իմունիտետը, արյան ճնշման, խոլեստիրինի բարձրացման պատճառ են դառնում, և այլն: (Սթյուարտ, 2019)

Ընդ որում, ինչպես ուսումնասիրությունները ցույց են տալիս, հանքերի և մոտակա համայնքների համար նախատեսված առողջապահական ծառայությունների, պետության և հանքային ընկերությունների համագործակցության հետևանքով համայնքի առողջապահական իրավիճակի մասին ոչ լիարժեք ուսումնասիրություններ են իրականացվում, քանի որ հիմնականում ուշադրություն չեն դարձնում հիվանդությունների առաջացման ողջ տնտեսական պատճառներին և աղքատությանը դրդող հանգամանքներին: (Սթյուարտ, 2019)

Իրավիճակը Հայաստանում

Հայաստանում ևս իրականացվում են էներգետիկ ծրագրեր՝ միջին և փոքր հէկ-երի կառուցում, հանքերի շահագործում, որոնք իրենց ազդեցությունն են թողնում միջավայրի և մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում, օրինակ, փոքր հէկ-երի բնապահպանական թողքի քանակը հիմնականում չի ապահովում գետային էկոհամակարգի հավասարակշռությունը և կենսաբազմազանության պահպանումը: (Էկոլուր , 2016) Ընդ որում, հետաքննությունները պարզել են, որ փոքր հէկ-երի առաջացրած բնապահպանական վնասներից ոչ միայն տուժում է տեղի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը ձկնապաշարների նվազման, այգիները չջրելու հետևանքով չորցաման արդյունքում, այլև փոքր հէկ-երից շահում են թերևս արդեն իսկ հարուստ բիզնեսմենները, պաշտոնյաները: (Աղալարյան, Հետք, 2015)

Հայաստանում մեկ այլ՝ ամերիկյան համալսարանի 2013թ-ին լույս տեսած ուսումնասիրությունն էլ ցույց է տալիս, որ, չնայած տնտեսական զարգացման ցուցանիշներ գրանցելուն, հանքարդյունաբերությունն, այնուամենայնիվ, ՀՀ-ում նպաստում է անհավասարությանն ու աղքատացմանը: Այս ուսումնասիրությունը ևս ընդգծում է այն, որ հանքերի հասցրած վնասները թերագնահատվում են, իսկ հանքերը տնօրինողները հաշվի չեն առնում ամբողջական վնասները, ինչն էլ հանգեցնում է բնության և տեղական ռեսուրսների վատթարացմանը, անհավասարությանը և աղքատությանը: (Գրիգորյան Ա. , 2013) Հեղինակը նաև նշում է դեպքերի մասին, երբ բնակիչները ստիպված են ցածր գներով վաճառել իրենց սեփականությունը որևէ հանքային ծրագիր իրականացնողի, ինչն, ըստ հեղինակի, աղքատացման պոտենցիալ ռիսկ է պարունակում: Այս ռիսկը մեծանում է նաև այն հանգամանքից, որ հանքերում աշխատողների համար չի կազմակերպվում առողջապահական ապահովագրություն և ողջ առողջապահական բեռը մնում է աշխատողի կամ իր ընտանիքի ուսերին: (ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն, 2013)

Հայաստանում իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ, որոնք ցույց են տվել հանքերի հետևանքով միջավայրի աղտոտվածության մակարդակն ու առողջապահական հետևանքները: Օրինակ, 2013թ-ին Ամերիկյան համալսարանը ստուգել է հանքեր, պղնձաձուլարաններ, պոչամբարներ ունեցող Լոռու և Սյունիքի մարզերի 11 համայնքների հողի նմուշները ծանր մետաղների հայտնաբերման նպատակով: Մասնավորապես Ալավերդի, Ախթալա ու Արմանիս համայնքների հողերում հայտնաբերվել են մեծ թվով կապար, արսեն,

քրոմ և կադմիում: Ընդ որում հողի նմուշները վերցվել են համայնքների տարբեր բանուկ հատվածներից՝ բնակելի շենքերի, դպրոցների բակերից, զբոսաշրջային վայրերից: Ուսումնասիրությունն ընդգծել է բնակելի գոտիներում աղտոտվածության բարձր մակարդակի հնարավոր վնասները տեղացիների առողջության վրա: (Հակոբյան, Մելքոմյան, Գրիգորյան, & Պետրոսյան, 2014):

Օրինակ, պարզվել է, որ Ալավերդի քաղաքում ապրող կանանց շրջանում մեռելածնության, բժշկի ցուցումով հղիության արհեստական ընդհատման, ինչպես նաև վաղ մանկական մահացության հավանականությունը կրկնակի բարձր է այլ բնակավայրերի հետ համեմատած, ինչը գիտնականները պայմանավորում են միջավայրի՝ ծանր մետաղներով ու ծծմբի երկօքսիդով աղտոտմամբ: (Էկոլուր, 2015)

2018թ-ին չեխ գիտնականները ևս ուսումնասիրել են Լոռու մարզի Ախթալա, Ալավերդի, Շնող համայնքներից վերցված հողի, ինչպես նաև ջրի, հավկիթի և մարդու մազի նմուշներ՝ դրանցում առկա մետաղների քանակն ու մարդկանց առողջության վրա ազդեցությունը պարզելու համար: Այս հետազոտությունները ևս բացահայտել են պղնձի, արսենի, մոլիբդենի, ցինկի ու կապարի բարձր կոնցենտրացիաներ Դեբեդ գետի ափերին, բնակիչների այգիներում, երեխաների խաղահրապարակներում: Մազերից վերցված նմուշներում մետաղների բարձր կոնցենտրացիա հայտնաբերվել էր մասնավորապես նրանց մոտ, ում սննդակարգում առկա են ձկնատեսակներ, ինչն էլ գիտնականները կապում են գետի աղտոտվածության հետ: (Բիստրյանսկի, 2018) Ուսումնասիրությունները նաև հայտնաբերել էին քաղցկեղածին քիմիական միացություն՝ դիօքսին, բնակիչների կողմից պահվող հավերի հավկիթներում: (Պետրլիկ & Ստրակովա, 2019)

Այս ուսումնասիրություններն անդրադառնում են նաև հանքերի ու պոչամբարների հետևանքով աղտոտված հողերի, ջրերի և օդի բացասական ազդեցությանը ոչ միայն մարդկանց առողջության, այլ նաև տնտեսական վիճակի վրա՝ նշելով, որ աղտոտվածությունը, հատկապես այն այգիներում, որոնք ջրվում են աղտոտված գետի ջրերով, հնարավոր պատճառ են բույսերի վնասման և արդյունքում նվազ պտղատվության համար: (Բիստրյանսկի, 2018) Որոշ տեղացիներ անգամ մտածում են դատարան դիմելու մասին՝ իրենց հասցված տնտեսական և առողջապահական վնասների համար փոխհատուցում պահանջելու նպատակով: (Պանորամա, 2019)

ԳԱԱ էկոլոգանոոսֆերային ինստիտուտի սննդի ռիսկերի գնահատման կենտրոնի՝ 2019թ-ին հրապարակած հետազոտությունն արձանագրել է պղնձի և մոլիբդենի հանք ունեցող Քաջարան քաղաքում ուսումնասիրված բանջարեղեններում սնդիկի, կադմիումի, կապարի, մոլիբդենի, պղնձի թույլատրված քանակը գերազանցող տվյալներ և եզրակացրել դրանց հնարավոր բացասական անդրադարձը մարդու առողջության վրա: (Պիպոյան, Ստեփանյան, Ստեփանյան, Բեգլարյան, & Մերենդինո, 2019) Տարիներ շարունակ այս կենտրոնն իրականացրել է նաև այլ ուսումնասիրություններ՝ բացահայտելու լեռնահանքային շրջաններում հողերի և աճեցված պտուղ-բանջարեղենների աղտոտվածության մակարդակն, ինչպես նաև սննդի անվտանգության խնդիրների մասին պարբերաբար ահազանգել է պետական մարմիններին՝ գյուղատնտեսության, առողջապահության նախարարություններին,

որոնց արձագանքը կենտրոնը գնահատում է ոչ համարժեք: (Պանորամա, 2019) Սակայն հաշվի առնելով միայն վերջին տասը տարիներին Հայաստանում արտադրական հողերի 30 տոկոս ավելացումը, առկա 613 հանքավայրերն ու 700 հեկտար զբաղեցնող 23 պոչամբարների աղտոտման ծավալները, (Ամփոփ, 2019) առաջ են գալիս հողերի դեգրադացման և, հետևաբար, պարենային անվտանգության խնդիրներ, որոնք ռիսկային են ոչ միայն առանձին տնտեսությունների, այլև ողջ պետության համար: Իսկ համաձայն ուսումնասիրությունների՝ տարածքներն, ուր հողի որակն ընկել է, ունեն աղքատության բարձր ցուցանիշներ: (ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիա, 2019)

Առողջապահական ու տնտեսական վնասներն, սակայն, չեն սահմանափակվում հողերի, ջրերի ու օդի աղտոտվածությամբ: Հանքերում աշխատանքային պայմաններում աշխատողների մահվան թիվն աշխարհում համարվում է ամենամեծը՝ տարեկան 15.000 մարդ, ընդ որում, սա գրանցված դեպքերի թիվն է, որն իրականում կարող է ավելի մեծ լինել: (The World Counts, 2019) Այս հանգամանքն, ինչպես նաև աշխատավայրում դժբախտ պատահարների հետևանքով առողջությանը հասցված վնասները, որոնց արդյունքում հանքափորներն այլևս չեն կարող վերադառնալ իրենց աշխատանքին (Մխիթարյան, 2019), իրենց հերթին տնտեսական բարդ իրավիճակում են դնում հանքափորների ընտանիքներին, հատկապես, երբ ինչպես Հայաստանի պարագայում նշվեց, գործատուները չեն ապահովագրում աշխատակիցներին: Այսպես, ՀՀ-ում 2018թ-ին 20 արտադրական դժբախտ պատահարներ են գրանցվել հանքերում, տուժել է 20 քաղաքացի, իսկ 3-ը մահացել են: (Պանորամա, 2019) Ընդհանուր առմամբ Հայաստանում 2017-2018թթ-ին հանքարդյունաբերության և բացահանքերի ոլորտում գրանցվել է 57 պատահար և 56 տուժած: (Ղազարյան, Հետք, 2020)

Այսպիսով, գլոբալ և լոկալ փորձը և օրինակները վկայում են, որ էներգետիկ ներդրումներ հաստատելիս, ինչպես նաև այդպիսի ծրագրեր մշակելիս և իրականացնելիս բավարար չէ առաջնորդվել միայն տնտեսական աճի ցուցանիշներով: Անհրաժեշտ է իրականացնել բազմակողմանի և համընդհանուր սոցիալ-տնտեսական ուսումնասիրություններ՝ հիմնվելով ներդրումային ծրագրի երկարաժամկետ ազդեցությունների գնահատման վրա՝ ինչպես միջավայրի աղտոտումից, հետագա տնտեսական կորուստներից, այնպես էլ իրավունքների ոտնահարումից խուսափելու համար: Ընդ որում, պետությունները նման պարտավորություն պիտի ստանձնեն ինչպես սեփական էներգետիկ ծրագրերն իրականացնելիս, այնպես էլ նման մոտեցում ցուցաբերեն յուրաքանչյուր ներդրումային ծրագրի համար, հատկապես որ սուղ միջոցներ ունեցող երկրները, ինչպիսին Հայաստանն է, բաց են միջազգային մասնավոր ընկերությունների և ֆինանսական հաստատությունների ներդրումային ծրագրերին: Սակայն վստահելի՞ են, արդյոք, միջազգային ֆինանսական ինստիտուտների ներդրումային ծրագրերը:

Ի՞նչ կապ ունեն միջազգային ֆինանսական ինստիտուտները բնապահպանական խնդիրների և աղքատության հետ

Համաշխարհային բանկ և Միջազգային ֆինանսական կորպորացիա

2015թ-ին լույս տեսավ Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումի և Հաֆինգթոն փոսթի համատեղ ուսումնասիրությունը, համաձան որի 2004-2013թթ-ներին մոտ 3 միլիոն 350 հազար մարդ է տարհանվել իրենց բնակության վայրերից ու հողերից՝ Համաշխարհային բանկի (ՀԲ) ներդրումային ծրագրերի իրականացման համար: Այս թիվը կարող է ավելին լինել, քանի որ ինչպես նշում են հետաքննողները, բանկը միշտ չէ, որ լիարժեք հաշվարկ է իրականացնում իր ծրագրերի բացասական հետևանքները կրող մարդկանց քանակի վերաբերյալ: (Չավկին, Հոլման, Հադսոն, Գալեգո, & Շիֆլետ, 2015)

Հետաքննողները մոտ 50 լրագրողներ են 21 երկրներից, ովքեր մեկ տարվա ընթացքում իրականացրել են հարցազրույցներ և ուսումնասիրել են բանկի ծրագրերի ազդեցությունը տարբեր երկրներում՝ Ալբանիայում, Բրազիլիայում, Եթովպիայում, Հոնդուրասում, Գանայում, Գվատեմալայում, Հնդկաստանում, Կոսովոյում, Պերույում, Սերբիայում և այլուր: Ներդրումները եղել են ջրամբարների, էլեկտրակայանների կամ այլ էներգետիկ ծրագրերի իրականացման համար: Ընդ որում, այս ծրագրերով խախտվել են ոչ միայն մարդկանց իրավունքներն, այլև իրականացված ծրագրերը չեն համապատասխանել հենց բանկի չափանիշներին: (Չավկին, Հոլման, Հադսոն, Գալեգո, & Շիֆլետ, 2015)

Հետազոտությունը բացահայտում է, որ բանկը և իր Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) ֆինանսավորել են մի շարք պետությունների և ընկերությունների, որոնք բազմիցս մեղադրվել են բռնաբարությունների, սպանությունների, կտտանքների և մարդու իրավունքների այլ խախտումների համար: Միայն 2009-ից 2013թ-ը բանկը մոտ 50 միլիարդ դոլար է ներդրել սոցիալական և բնապահպանական տեսանկյունից բարձր ռիսկայնությամբ ծրագրերում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծրագրերից հատկապես տուժել են ֆերմերները, ձկնորսները, անտառաբնակները, բնիկ ժողովուրդները և այլն: Բանկի ներկա և նախկին որոշ աշխատակիցներ իրենք էլ նշում են, որ բանկի չափանիշները հաճախ տեղի են տալիս ներքին ճնշումներին՝ խոշոր ծրագրերի համար թույլտվություններ ստանալու համար: Նրանք նշում են, որ բանկի հաջողությունները չափվում են ֆինանսավորված ծրագրերի քանակով, ուստի և լրացուցիչ պահանջները, որոնք ավելացնում են ծրագրերի արժեքը, պարզապես անտեսվում են: (Չավկին, Հոլման, Հադսոն, Գալեգո, & Շիֆլետ, 2015)

Համաշխարհային բանկի 2014թ-ի սեփական ուսումնասիրությունը բացահայտեց, որ բանկի ուսումնասիրած ծրագրերի 60 տոկոսի դեպքում բանկը չի արձանագրել իր ծրագրերի արդյունքում տեղահանվածների հետագա վիճակը, իսկ 70 տոկոսի դեպքում չի գրանցել տեղեկություններ այն մասին, թե արդյոք եղել են բողոքներ, և արդյոք բողոքները ստացել են լուծումներ, փաստելով, որ բողոքներին արձագանքելու բանկի մեխանիզմները պարզապես

գոյություն են ունեցել թղթի վրա, բայց ոչ գործնականում: (Չավկին, Հոլման, Հադսոն, Գալեգո, & Շիֆլետ, 2015)

Չնայած նրան, որ բանկն իր առջև նպատակ է դրել վերացնել աշխարհում աղքատությունը մինչ 2030թ-ը՝ տարբեր ուսումնասիրություններ ոչ միայն փաստում են բանկի իրականացրած ներդրումների հետևանքով իրավունքների խախտումների և անհավասարության խորացման մասին՝ բանկի ֆինանսավորած ծրագրերի հետևանքով մասսայական տեղահանումների, սննդի պաշարների վտանգման, այդ ծրագրերում երեխաների և ընդհանրապես հարկադիր աշխատանքի կիրառման հետևանքով: Բանկի ֆինանսավորած ծրագրերի դրական արդյունքների մասին ևս չկան փաստող արդյունքներ: (BrettonWoods Project, 2019) Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին 40 տարիներում աղքատության հաղթահարման գործում բանկի արձանագրած հաջողությունները թերևս միայն Չինաստանին են վերաբերում, ուր, սակայն, ոչ միայն ծրագրեր իրականացնելիս բանկի չափանիշներին առանձնապես չեն հետևել, այլև վերջին տարիներին աղքատության նվազման տեմպերը դանդաղել են: Վերլուծաբաններն անգամ քննադատության են արժանացնում բանկի՝ աղքատության մակարդակի չափման մեթոդներն, ինչի արդյունքում աղքատության նվազման գործում բանկի կարողությունները կասկածի տակ են դրվում: (BrettonWoods Project, 2019)

Ըստ ուսումնասիրությունների՝ բանկը նպաստում է աղքատացմանը ոչ միայն բնապահպանական տեսանկյունից խնդրահարույց ծրագրերի միջոցով, այլև ծրագրերն այնպիսի պայմաններով ֆինանսավորելով, որոնց արդյունքում պետությունները կրճատում են աշխատավարձերը պետական հաստատություններում, ավելացնում են ավելացված արժեքի հարկերը կամ ռեգրեսիվ հարկեր են ներմուծում, թուլացնում են աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմները, կրճատում կամ մասնավորեցնում են սոցիալական ծառայությունները և այլն: Նման քաղաքականությունները ոչ միայն հանգեցնում են անհավասարությանն, այլև խոչընդոտում են պետություններին իրագործել մարդու իրավունքների ասպարեզում ստանձնած պարտավորությունները: Միևնույն ժամանակ՝ բանկն անուշադրության է մատնում մարդու իրավունքների և անհավասարության վրա իր ֆինանսավորած ծրագրերի բացասական ազդեցությունների գնահատում իրականացնելու մասին կոչերը: (BrettonWoods Project, 2019) Ընդ որում, բանկի մաս կազմող Միջազգային ֆինանսական կորպորացիան բնապահպանական և սոցիալ-տնտեսական տեսանկյունից խնդրահարույց և աղքատացմանը նպաստող մի շարք ծրագրերում ներդրումներ է անում նաև միջնորդավորված, ինչպես օրինակ Հնդկաստանում (inclusive development international, 2016) և Ասիայի հարավարևելյան այլ երկրներում (inclusive development international, 2017) ֆինանսավորելով բանկերի, որոնք էլ իրենց հերթին ֆինանսավորում են կորպորացիաների խնդրահարույց ծրագրեր:

Անգամ 2012թ-ին սկսված գործընթացը, որով բանկը վերանայեց իր սոցիալ-բնապահպանական չափանիշները և 2016թ-ին հաստատեց փոփոխությունները, մասնագետների կողմից արժանացավ քննադատության՝ որակվելով որպես առավել թույլ չափանիշներ: (Փրեդ & Բուգալսկի, 2017) Ընդ որում, 2018թ-ին ուժի մեջ մտած այս տարբերակը ոչ բոլոր ծրագրերի համար է և նախատեսված չէ, օրինակ այն ծրագրերի համար, որոնցով

բանկը ֆինանսավորում է տրամադրում ազգային քաղաքականությունների և ինստիտուցիոնալ ռեֆորմների դիմաց: (BrettonWoods Project, 2019)

Հայտարարած նպատակների ու գործնական ներդրումների հակասություններից մի օրինակ էլ վերաբերում է տարբեր երկրներում բանկի ներդրումներն, օրինակ ածխի էլեկտրակայանների կառուցման ոլորտում: Չնայած 2014թ-ից ի վեր բանկն ուղղակիորեն ներդրումներ չի անում այս ոլորտում՝ այնուամենայնիվ, 675-ից ավել ներդրումային ծրագրերի հետազոտությունը ցույց է տվել, որ 2014-2018թթ-ի ընթացքում բանկը մոտ 12 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրում է հաստատել հանածո վառելիքների ծրագրերում, համեմատած 5 միլիարդ ԱՄՆ դոլար ներդրումները վերականգնվող էներգիայի ոլորտում, միևնույն ժամանակ պահանջել է պետություններից ներդրումային խթաններ ստեղծել ածխի, նավթի ու գազի համար: Հետազոտողները նման ծրագրերը հակասական են համարում բանկի հայտարարած՝ կլիմայական փոփոխությունների դեմ պայքարում իր իսկ նպատակներին: (Ռիչ, 2019)

Հայաստանում ևս ՀԲ-ի հայտարարած նպատակներից է նվազեցնել աղքատությունը, ուստի բանկն իր զեկույցում կլիմայական փոփոխությունները լուրջ վտանգ է դիտարկում ինչպես երկարաժամկետ կենսակայուն տնտեսական զարգացման, այնպես էլ աղքատության նվազման գործում: Բանկն իր զեկույցում նշում է երաշտի վտանգները Հայաստանում գյուղատնտեսության համար և ջրի հասանելիության տեսանկյունից՝ ընգծելով, որ կլիմայական փոփոխությունները կհանգեցնեն ջրային պաշարների նվազմանը, ինչպես նաև հողերի դեգրադացմանը: Վերջինիս պատճառներից զեկույցը նշում է նաև անտառների կորուստը և հանքերից աղտոտված տարածքների ծավալները: Ընդ որում, բանկը նշում է, որ չնայած օրենքները բարելավում են, այնուամենայնիվ, իրագործումը դեռ արդյունավետ չէ: (Համաշխարհային բանկ, 2019) Ուստի բանկի ծրագրերից է ամրապնդել ինչպես ջրօգտագործողների ասոցիացիաները՝ ոռոգման իր ծրագրերով ջրի կառավարումն արդյունավետ դարձնելու համար, այնպես էլ բանկը նպաստել է հանքերի կառավարման ոլորտում նոր օրենքի մշակմանը, ինչպես նաև շարունակում է խորհրդատվություն տրամադրել Հայաստանի կառավարությանը հանքերի կառավարման այնպիսի քաղաքականություններ մշակելու գործում, որոնցով կբարելավի ոլորտի կառավարումն ու գործի կդրվեն առկա օրենքները: (Համաշխարհային բանկ, 2019)

Այնուամենայնիվ, Հայաստանում բանկի իրականացրած ծրագրերում ևս տեսականի և գործնականի որոշակի անհամապատասխանելիություն կա: Հայաստանում բանկի իրականացրած ներդրումային ծրագրերից Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման ծրագիրն, օրինակ, ծրագրի ազդեցությունը կրող համայնքների և բնապահպանների կողմից ոչ միայն որակվել է որպես հակաբնապահպանական, այլ նաև հակասոցիալական: Մտահոգությունները վերաբերում էին ինչպես ծրագրի հետևանքով Ազատ գետում ջրի նվազման, էկոհամակարգի վատթարացման ռիսկերին, այնպես էլ հարակից համայնքների տնտեսական գործունեության վնասի, (Inspection panel, 2016) հանրային լսումներին ծրագրի հանդեպ բնակիչների արտահայտած անհամաձայնության անտեսմանը, ակտիվ բնակիչների ահաբեկմանը, (Պետրոսյան, 2016) ինչպես նաև ծրագրում որոշ փոփոխություններ անելուց հետո ազդակիր համայնքներում հանրային լսումների ու նոր

բնապահպանական գնահատման չիրագործմանը, (Էկոլուր, 2017), ավելին, ծրագրի իրականացման արդյունքում բնակիչների՝ ջրի կարիքի ստորադասմանը մի շարք պաշտոնյաների կարիքներին, ովքեր, ըստ հետաքննող լրագրողների, ևս հանդիսանալու էին այս ծրագրի շահառու՝ օգտվելով ոռոգման նոր համակարգից: (Մեդիա կենտրոն, 2016)

Բանկի մեկ այլ հակասական ներդրում էլ մասնավորապես իր Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներդրումն էր Հայաստանի Վայոց Ձոր մարզի Ամուլսար տեղանքում ոսկի արդյունահանելու ծրագրում: ՄՖԿն-ն ոչ միայն 2007թ-ից սկսած ներդրել էր մոտ 13 միլիոն ԱՄՆ դոլար այս ծրագրում, այլև ծրագիրն իրագործող ընկերության խոշոր բաժնետերերից էր: Այս ծրագիրն, սակայն, ըստ միջազգային ու տեղական գիտնականների, ռիսկեր էր ներկայացնում տարածաշրջանի էկոհամակարգի և ջրային պաշարների համար: (Bankwatch network, 2019) Բացի այդ, տեղի բնակիչները նաև իրենց մտահոգություններն էին հայտնում տարածաշրջանի տնտեսական վիճակին այս ծրագրի հասցրած վնասների շուրջ՝ հաշվի առնելով Ամուլսարի մոտակայքում գտնվող գյուղատնտեսական հողերի առկայությունն ու դրանց աղտոտման ռիսկերը, Ամուլսարի մոտակայքում գտնվող Ջերմուկ առողջարանային քաղաքին հասցված վնասները, արդյունքում նաև տեղացիների ապրուստի վատթարացման և մի շարք այլ ռիսկերը, որոնց կապակցությամբ էլ նրանք դեռևս 2014թ-ին բողոք էին ներկայացրել Միջազգային ֆինանսական կորպորացիայի օմբուդսմենի գրասենյակ: (Compliance Advisor Ombudsman, 2014)

Վերջինս ՄՖԿ չափանիշներին չհամապատասխանող մի շարք բացթողումներ էր արձանագրել ծրագրում, ինչպես, օրինակ, ընկերության իրականացրած ոչ պատշաճ հանրային լսումները, ծրագրից սպասվող ռիսկերի թերագնահատումն ինչպես մոտակա համայնքների համար, այնպես էլ Ջերմուկի տուրիստական բրեդնի վրա և այլն: (Լյախով, 2018) Ու թեև 2017թ-ին ՄՖԿ-ն դադարեցրեց այս ծրագրում իր մասնակցությունն, այնուամենայնիվ, նման որոշումն, ինչպես նշված էր ՄՖԿ-ի հայտարարությունում, պայմանավորված էր ծրագրում ՄՖԿ-ի գործունեության հաջող ավարտով՝ ծրագրի՝ ՄՖԿ-ի և միջազգային չափանիշներին համապատասխանելիությամբ և մասնավոր այլ ներդրողներին ծրագրում ներգրավելու հաջողությամբ: Այս ծրագիրը, որը ռիսկային էր գնահատվել գիտնականների կողմից և թերի՝ ՄՖԿ-ի օմբուդսմենի կողմից, ՄՖԿ-ի հայտարարության համաձայն՝ կարող է օրինակ ծառայել Հայաստանի այլ հանքային ծրագրերի համար և մեծապես նպաստել Հայաստանի տնտեսական աճին, իսկ «ՄՖԿ-ն կշարունակի կենտրոնացնել իր ռեսուրսներն այլ կենսակայուն ծրագրերի իրագործման վրա»: (Business & Human Rights Resource Center , 2017)

Այնուամենայնիվ, այս ծրագիրը, որի իրագործման համար բացահայտվել են նաև կոռուպցիոն գործարքներ (Էկոլուր, 2019), ինչպես նաև հարուցված են մի քանի դատական գործեր, (Էկոլուր, 2019) 2018թ-ի կեսերից դադարեցվել է հարակից համայնքների բնակիչների կողմից, ովքեր, շրջափակելով դեպի Ամուլսար տանող ճանապարհներն, այս կերպ իրենց անհամաձայնությունն են հայտնել այս ծրագրին՝ ձգտելով կանխել միջավայրի աղտոտումն ու բացասական տնտեսական հետևանքները տարածաշրջանի համար: (Լյախով, 2018)

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) երկու տասնամյակ գործունեության հետևանքներն ուսումնասիրող Բենքուոչ կազմակերպությունը դեռևս 2014թ-ին հրապարակել է մի զեկույց, որով քննադատել է բանկի այն մոտեցումը, որով բանկը ձգտում է զարգացնել մասնավոր հատվածը, հույսով, որ մյուս ոլորտներում էլ ինքնին կհետևեն դրական փոփոխություններ: Զեկույցը կոչ է անում բանկին զգուշություն դրսևորել ներդրումներ անելիս և չթերագնահատել հանրային մասնակցությունը և կոռուպցիայի ու մարդու իրավունքների խախտումներին պատշաճ արձագանքելը: Ու թեև բանկը որոշակիորեն բարելավել է իր չափանիշները, զեկույցը նշում է, որ, այնուամենայնիվ, բանկը չի դադարել հակասական ծրագրերում ներդրումներ անելուց, որոնք ավիրում են էկոհամակարգեր, ինչպես, օրինակ, հիդրոէլեկտրակայանների ֆինանսավորումը Վրաստանում, Հյուսիսային Մակեդոնիայում, կամ հանքերի ծրագրեր, որոնք խաթարում են ապրելակերպեր, ինչպես Մոնղոլիայի Օյու Տոլգոյ հանքի ծրագիրը: Զեկույցը նաև նշում է, որ բանկը նաև թափանցիկության, տեղեկատվության հասանելիության հետ կապված խնդիրներ ունի, ինչպես նաև անկարող է տրամադրել իր ծրագրերի դրական հետևանքների համակարգված որևէ ուսումնասիրություն: (CEE Bankwatch network, 2014)

Զեկույցը նաև քննադատաբար է մոտենում բանկի ֆինանսավորած ծրագրերի համար կիրառվող «միջազգային լավագույն փորձ» եզրույթին, նշելով, որ դրա փոխարեն ֆինանսավորվող բոլոր ծրագրերի համար պետք է կիրառվեն Եվրամիության առավել հստակ բնապահպանական չափանիշներ: Իսկ սոցիալական արդարության ասպարեզում զեկույցը բանկի տեսլականը թերի է գնահատում, նշելով, որ սոցիալական չափանիշներն ու սկզբունքները ՎԶԵԲ գործարքներում այնքան էլ ներառված չեն, ինչի արդյունքում էլ բանկն անգամ ամենաաղքատ երկրներում չի ստուգում իր տրամադրած ֆինանսների արդյունքները, օրինակ, աղքատության նվազման ցուցանիշները, հավատալով, որ մասնավոր հատվածի զարգացումը լավ է բոլորի համար: Զեկույցը հարցադրում է բանկի՝ սոցիալական արդարության և զարգացման տեսլականը՝ նշելով, որ բանկը ներդրումներ է անում նաև այնպիսի ծրագրերում, որոնց իրագործողներն ամենևին էլ աջակցության կարիք չունեն՝ ինչպես օրինակ ռուսական, լեհական, հունական մեծ կորպորացիաների և օլիգարխների ծրագրերն, այդ թվում հյուրանոցային համալիրի, առևտրի կենտրոնի, ճանապարհի կառուցման ծրագրերը: Ըստ զեկույցի՝ բանկը ներդրումներ է անում մասնավոր հատվածի գրեթե ցանկացած ծրագրում և անվանում է դա անցումային փուլի ներդրում: (CEE Bankwatch network, 2014)

Զեկույցը նաև նշում է, որ թեև բանկը ձգտում է կրճատել իր ներդրումները կլիմայի վրա ազդող ծրագրերում, և, օրինակ, 2014թ-ից ի վեր սահմանափակել է ածխի էլեկտրակայանների ֆինանսավորումը, այնուամենայնիվ, կլիմայական փոփոխությունների հանդեպ բանկի դիրքորոշումն այնքան էլ հստակ չէ, հաշվի առնելով բանկի՝ ջերմոցային գազերի արտանետման կրճատմանն ուղղված նպատակների բացակայությունը, նավթի և գազի ոլորտում շարունակվող ներդրումները, որոնց գումարվել են նաև մեծ հիդրոէլեկտրակայաններում ներդրումները: (CEE Bankwatch network, 2014)

Հատկանշական է, որ այս բանկի ներդրումները հիդրոէլեկտրակայաններում ևս առաջացրել են բողոքներ և անհամաձայնություններ հատկապես բալկանյան երկրներում և Վրաստանում: ՎԶԵԲ-ը ներդրումներ է արել, օրինակ, Վրաստանում, չնայած նրան, որ մի կողմից տեղացիները նախատեսվող հիդրոէլեկտրակայաններին դեմ են արտահայտվել, մյուս կողմից էլ թերի է Վրաստանի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի համակարգը հանրությանը տեղեկատվություն տրամադրելու, որոշումների կայացմանը հանրային մասնակցության տեսանկյունից, ինչպես նաև թերի է համայնքային հողերը պաշտպանող օրենքը, ուստի դրանք կարող են օգտագործվել ցանկացած ծրագրի համար, ներառյալ հիդրոէլետկտրակայանների՝ այդպիսով տեղացիներին թողնելով առանց արոտավայրերի, ոռոգման ջրի, դառնալով նաև հեղեման և տեղացիներին տեղահանման, սննդի պաշարների նվազման պատճառ: (CEE Bankwatch network, 2019)

ՎԶԵԲ-ը, Համաշխարհային բանկը և եվրոպական մեկ այլ բանկ՝ Եվրոպական ներդրումային բանկը, մոտ 82 հիդրոէլեկտրակայանի ծրագրեր են ֆինանսավորել նաև Բալկաններում, և նրանց անգամ չի կանգնեցրել այն փաստը, որ դրանցից 37-ը գտնվել են բնության պահպանվող տարածքներում: Այս ծրագրերին և նոր նախագծերին ընդդիմացող անհատներ և կազմակերություններ իրենց բողոքը հայտնելիս վերոնշյալ բանկերին կոչ են արել դադարեցնել հարուստ էկոհամակարգ ունեցող գոտիներում ներդրումներ անելը, նախապատվություն տալ առավել կանաչ, վերականգնվող էներգետիկայի ոլորտին, (Յովանովիչ, 2018) և ցուցաբերել որոշումների կայացման թափանցիկություն: (Balkan Green Energy News, 2018)

Այնուամենայնիվ, այս և այլ ֆինանսական ինստիտուների ներդրումներն այդ թվում նաև սոցիալական ու բնապահպանական առումով խնդրահարույց ծրագրերում շարունակվում են, և երբեմն նաև այս ծրագրերի իրականացման գործում, որպես լծակ, օգտագործվում են նաև այլ պետությունների դիվանագիտական կառույցները: Այսպես, վերոնշյալ մոնղոլական հանքային Օլու Տոլգոյ ծրագիրը, որը Մոնղոլիայում ոսկու և պղնձի ամենամեծ պաշարով հանքավայրն է, մտահոգել է ինչպես ազդակիր համայնքներին, այնպես էլ միջազգային քաղհասարակությանը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի թերի լինելու՝ դրանում պոչամբարի կառավարման, հանքի փակման և ռեկուլտիվացիայի ծրագրերի բացակայության պատճառով, ինչպես նաև տարածքում մակերևութային ջրերի միակ աղբյուր հանդիսացող Ունդայ գետի հունի փոփոխության հետևանքով էկոհամակարգին և տեղի բնակիչներին, հատկապես անասնապահներին, հասցվող վնասների պատճառով: (Bank Information Center, 2013) Ընդհանրապես, չնայած Մոնղոլիան իր բնական ռեսուրսների շնորհիվ աշխարհի ամենաարագ աճող տնտեսությունն ունի, սակայն բնակչության մեկ երրորդն ապրում է աղքատության մեջ: (CEE Bankwatch network, 2014)

Եվ ահա այս ծրագրում ներգրաված են եղել ոչ միայն Համաշխարհային բանկն իր Միջազգային ֆինանսական կորպորացիայով, ՎԶԵԲ-ը, Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) և մի քանի խոշոր անգլո-ավստրալական և կանադական կորպորացիաներ, այլ նաև Մոնղոլիայում ԱՄՆ դեսպանատունը, ինչպես նաև մի քանի այլ պետություններ, ինչպես օրինակ Բրիտանիան, Կանադան և այլն: Արտահոսած տեղեկություններից պարզ է դառնում, որ տարբեր առիթներով հանքը շահագործել ձգտող կորպորացիաները դիմել են նշված պետություններին՝ առաջարկելով ազդել մոնղոլական կառավարության վրա, որպեսզի վերջինս զերծ մնա

հանքային բիզնեսից՝ միևնույն ժամանակ ստեղծի թափանցիկ, կանխատեսելի, լավագույն փորձի վրա հիմնված, օրենսդրական դաշտ երկրի ռեսուրսները արդյունահանելու նպատակով: (SOMO, OT Watch, 2020)

Ավելին, ինչպես ԱՄՆ դեսպանատան արտահոսած նամակագրություններից է պարզ դառնում, ԱՄՆ-ի հետաքրքրվածությունն այս ծրագրում պայմանավորված է եղել նրանով, որ ծրագրի իրագործումը կստեղծի մեծ շուկա հանքային սարքավորումներ արտադրող ամերիկյան ընկերությունների համար (մոտ 200 միլիոն ամերիկյան դոլար շրջանառությամբ): Իսկ 2008թ-ի խորհրդարանական և 2009թ-ի նախագահական ընտրություններից հետո արևմտյան պետությունների և հանքային ընկերությունների ջանքերը հնարավոր են դարձրել Մոնղոլիայում որոշումների կայացումն իրականացնել ի նպաստ շուկայական հարաբերություններին: (SOMO, OT Watch, 2020) Իսկ ահա մոնղոլական պետությունը, որն այս ծրագրի համար անգամ ջրերի, ճանապարհների, նախատեսվածից ավել եկամուտների հարկման և կորպորատիվ հարկերի մասին օրենքներն էր փոփոխել, ծրագրի միայն 34% մասնաբաժինն է ձեռք բերել: Ավելին, չունենալով բավարար գումար հանքի ծախսերի իր մասնաբաժինը հոգալու համար, մոնղոլական կառավարությունն այդ գումարը վարկի տեսքով ներգրավել էր հանքը շահագործող կորպորացիաներից մեկից, ինչի արդյունքում էլ, ըստ որոշ ֆինանսական զեկույցների, այս ծրագիրը պարզապես չնչին եկամուտներ է բերելու Մոնղոլիայի բյուջեին՝ տնտեսական աճի ու բնակչության բարեկեցության վրա որևէ դրական անդրադառձ չունենալով: (SOMO, OT Watch, 2020)

Հայաստանում ՎԶԵԲ-ը ևս ներգրաված է վերոնշյալ Ամուլսարի հակասական ծրագրում: Այն բաժնետեր է ծրագիրն իրականացնող ընկերությունում և ներդրել է մոտ 11 միլիոն եվրո, չնայած ծրագրի թերացումներին և բանկի հայտարարությանը, որ բանկը ժողովրդավարության, սոցիալական և բնապահպանական պատասխանատվության արժեքները կրող հաստատություն է: (European Bank for Reconstruction and Development, 2019) Ծրագրին դեմ բնակիչներն այս բանկին ևս բողոք են ներկայացրել 2014թ-ին, սակայն բանկը մերժել է դիմումը՝ նշելով, որ բանկը չի հովանավորել հանքարդյունահանման փուլը, ուստի և չի կարող պատասխանատվություն կրել շահագործման փուլում հնարավոր ազդեցությունների համար: (Էկոլուր, 2019) Եվ չնայած դրան, բանկն իր կայքում նշում է, որ տեղյակ է ծրագրի հնարավոր ռիսկերի մասին, սակայն վստահ է, որ ծրագրի ազդեցության մեղմացման շնորհիվ հնարավոր կլինի ծրագիրը համապատասխանեցնել միջազգային լավագույն փորձին և բանկի չափանիշներին: (European Bank for Reconstruction and Development, 2016) Այս բանկը նաև հայկական բանկերից մեկի՝ Ամերիաբանկի բաժնետեր է, որը ևս ծրագրում էր ներդրումներ անել այս ծրագրում՝ մասնավորապես 24 միլիոն դոլար վարկ տրամադրել այս հակասական ծրագրի իրագործմանը: (Էկոլուր, 2016)

Այս ծրագրում նաև ներգրաված են եղել ԱՄՆ և բրիտանական դիվանագիտական թևերը՝ հանքի ծրագիրը գովաբանող ելույթներով, ծրագրի տեղամաս այցելություններով, (Էկոլուր, 2013) բնակիչների կողմից ծրագիրը դադարեցնելու կապակցությամբ մտահոգություններ հայտնելով, (Մկրտչյան, 2018) բնապահպանական և սոցիալ-տնտեսական առումով այս հակասական ծրագիրը միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող նՀայաստանում

պատասխանատու հանքարդյունաբերության օրինակ անվանելով և ՀՀ պաշտոնյաների հետ այս հարցի շուրջ շարունակական հանդիպումներ իրականացնելով: (Ռոուլի, 2019)

Տարբեր զեկույցներ և վերլուծաբաններ խոշոր պետությունների և մասնավոր հատվածի այսպիսի համագործակցություններն անվանում են կորպորատիվ շահերի պաշտպանություն ի վնաս ժողովրդավարության: Նման համագործակցությունները մտահոգիչ են ոչ միայն բնության և սոցիալ-տնտեսական վիճակի վրա բացասական հետևանքներով, այլ նաև պետության արտաքին պարտքի ավելացման տեսանկյունից, ինչն էլ հետագայում բացասաբար է ազդում բնության և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա: (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ, n.d.) Նման մի համագործակցություն է ՎԶԵԲ-ի և Եվրոպական ներդրումային բանկի ներդրումը Հայաստանում նոր աղբավայրերի կառուցման ծրագրերում, որոնցից ամենախոշորը նախատեսվում է կառուցել Երևանում այս բանկերի տրամադրած մոտ 16 միլիոն եվրո վարկային միջոցներով: Ծրագրի ընդհանուր արժեքը մոտ 26 միլիոն եվրո է: Բնապահպաններին մտահոգել է մասնավորպես այն, որ այս վարկային ծրագիրը ծանրացնում է պետության արտաքին պարտքն ու, այնուամենայնիվ, առաջարկում է աղբի կառավարման ժամանակավոր լուծում՝ առանց կենսակայուն բաղադրիչների, քանի որ ծրագրով թափոնների վերամշակում չի նախատեսվում, ծրագրվում է նոր աղբավայրը կառուցել նոր հողատարածքներում և սահմանափակ ժամկետով շահագործման համար՝ մոտ 30 տարի: Սա, ըստ բնապահպանների, անհեռատես մոտեցում է ոչ միայն բնապահպանության, այլև տնտեսական տեսանկյունից, քանի որ հետագայում վերամշակման ծրագիր իրագործելու և պետական պարտքի կրկին ավելացումն իր հերթին նվազեցնելու է պետության ծախսերը բնության պահպանության և սոցիալական ապահովության ոլորտում: (Հետք, 2018)

Եվրոպական ներդրումային բանկ

Այնուամենայնիվ, միջազգային ֆինանսական ինստիտուտները շարունակում են բանավոր պնդել կենսակայուն և կանաչ ներդրումներ անելու մասին: Օրինակ, Եվրոպական ներդրումային բանկը հայտարարել է Եվրոպական Կանաչ համաձայնագրի իրագործման մեջ առաջատար դեր խաղալու մասին (համաձայնագրով նախատեսվում է մինչ 2050թ-ը վերացնել Եվրոպայի ազդեցությունը կլիմայական փոփոխությունների վրա), իսկ 2021թ-ից ի վեր բանկը չի ֆինանսավորելու հանածո վառելիքի ծրագրեր: Չնայած սրան, անգամ բանկի նախագահը հայտարարել է, որ բանկի մեթոդոլոգիան երբեմն այնպես է կիրառվում, որ որոշ ծրագրերի միայն անվանումն է լինում կանաչ ներդրում: (Չեդուիկ, 2020) Բանկին վերագրվում է ոչ թափանցիկ գործունեություն, բանկի գործունեությունից տուժածների դիմումների անտեսում, օֆշորներում գրանցված և հարկերից խուսափող ընկերությունների միջոցով ծրագրերի իրագործում, մարդու իրավունքների պաշտպանության հանդեպ թույլ վերահսկողություն, (CEE Bankwatch network, Counter Balance, 2016) ինչպես նաև բողոք-դիմումների անարդյունավետ մեխանիզմի կիրառում, (CEE Bankwatch network, 2018), չնայած նրան, որ միջազգային քաղաքացիական հասարակության 25 կազմակերպություն 2017թ-ին դիմել էր բանկին՝ բողոքների մեխանիզմն ուժեղացնելու կոչով: (Counter Balance, 2017)

Այս բանկը ևս ներգրված է խնդրահարույց հանքային, նավթային, ջրամբարային ծրագրերում հատկապես եվրոպական տարածաշրջանից դուրս: Օրինակ, Վրաստանում կառուցվող խնդրահարույց հիդրոէլեկտրակայաններից մեկում՝ Վերին Սվանետիում գտնվող Նենսկրա գետի վրա կառուցվելիք հէկ-ում ներգրված են մի շարք ֆինանսական ինստիտուտներ, այդ թվում նաև Եվրոպական ներդրումային բանկը: Այս ծրագիրը ևս մեծ ընդդիմության է արժանացել ինչպես դրա բացասական բնապահպանական հետևանքների համար, այնպես էլ տեղի բնիկ սվան ժողովրդի կողմից՝ նրանց տեղահանման, իրենց հողից և ապրուստի միջոցներից զրկելու ռիսկերի հետևանքով: (CEE Bankwatch network, 2019) Այս հակասական ծրագրում բացի Եվրոպական ներդրումային բանկից ներգրված են նաև ՎԶԵԲ-ը, Ասիական զարգացման բանկը, Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկը, Կորեական զարգացման բանկը:

Գերմանական զարգացման բանկ

Հայաստանում ևս ֆինանսական ինստիտուտները ներգրված են հէկ-երի կառուցման ոլորտում, չնայած որ հէկ-երի՝ վերականգնվող էներգիայի աղբյուր հանդիսանալն այնքան էլ միանշանակ չէ, իսկ վերջին տարիներին հէկ-երի կառուցումն ընդդիմության է բախվում ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալ-տնտեսական խնդիրներից ելնելով: Օրինակ, Գերմանական զարգացման բանկը (KfW) ներգրված է ինչպես Հայաստանի համեմատաբար մեծ հէկ-երը՝ Որոտան (Ավանեսով, 2017) և Քանաքեռ (Արմենպրես, 2004) հէկ-երը ֆինանսավորող վարկային ծրագրերում, այնպես էլ փոքր հէկ-երի կառուցման ծրագրերում: (Մեդիամաքս, 2012) Որոտան հէկ-ում ներգրված է նաև Միջազգային ֆինանսական կորպորացիան: Եվ դա չնայած նրան, որ այս հէկ-ի սեփականաշնորհման և վաճառքի գործարքները, որոշ վերլուծությունների համաձայն, իրականացվել են ՀՀ օրենքների, մասնավորապես ջրերի մասին և պետական գույքի մասնավորեցման մասին օրենքների խախտումներով, ոչ թափանցիկ որոշումների և կոռուպցիոն գործարքների միջոցով: (Գրիգորյան Ա. , 2014) Բնապահպանները մշտապես բարձրաձայնել են նաև փոքր հէկ-երի առաջացրած խնդիրները, որոնց թվում են նաև Գերմանական զարցագման բանկի ֆինանսավորած փոքր հէկ-երը՝ կոչ անելով ֆինանսական միջոցներ տրամադրելիս հետամուտ լինել էկոհամակարգի համար այդ ծրագրերի անվտանգ լինելուն: (Հայկական բնապահպանական ճակատ, 2015) Այնուամենայնիվ, անգամ որոշ փոքր հէկ-երի ղեկավարներ նշում են, որ այս բանկի նպատակը ոչ այնքան վերականգնվող էներգիայի ասպարեզում կենսակայուն ներդրումներ անելն է, որքան իր տրամադրած ներդրումներից եկամուտներ ստանալը, նշելով, որ բանկը չի ֆինանսավորում, օրինակ, հանքարդյունաբերությունից աղտոտված գետերի վրա հէկ-երի կառուցումը՝ աղտոտված գետերից տեխնիկային վնաս հասցնելուց և առաջացած հնարավոր ծախսերից խուսափելու համար: (Էկոլուր, 2014)

Ասիական ֆինանսական ինստիտուտներ

Թեև այս ուսումնասիրության մեջ համեմատաբար քիչ են քննարկվում, օրինակ, ասիական կամ ռուսական ֆինանսական ինստիտուտները, սակայն այս բանկերի ֆինանսավորած ծրագրերի բացասական ազդեցությունն էկոլոգիայի և սոցիալ-տնտեսական վիճակի վրա պակաս չէ: Օրինակ, Մումբայ քաղաքում տեղի ունեցած Ենթակառուցվածքային ֆինանսավորման թեմայով Ժողովուրդների համագումարը, որին մասնակացել են Հնդկաստանի քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչներ, մի բանաձև են ընդունել, որում նշում են, որ ասիական զարգացման բանկերի գործելաոճը արևմտյան ֆինանսական ինստիտուտների պես ոչ ժողովրդավար, բնության և սոցիալ-տնտեսական վիճակը վատթարացնող ոճով է իրականացվում: Նրանք նշում են օրինակներ, ինչպես Չինաստանի հիմնադրած Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի ներդրումները Հնդկաստանում քաղաքների, ճանապարհների կառուցման ոլորտում, և թե ինչպես են դրանք տեղացի բնակչության տեղահանման, աղքատացման, ինչպես նաև բերրի հողերի կորստի պատճառ դարձել: Ընդ որում, նրանք նշում են մի սցենար, որը հաճախ կրկնվում է նաև այլ պետություններում, երբ վերջիններս շարունակ պնդում են պետության սուղ միջոցների և սոցիալական, առողջապահական, կրթական և այլ ոլորտներին գումարներ տրամադրելու անհնարինության մասին, սակայն կարողանում են հանրային բյուջեն ծառայեցնել միջազգային ֆինանսական ինստիտուտների մեգա ծրագրերի իրագործման համար, անգամ երբ այդ ծրագրերի իրագործումն արդարացված չէ: (Մումբայի բանաձև, 2018)

Հակաբնապահպանական որակված գազի մատակարարման ծրագրում, որն ադրբեջանական գազը Թուրքիայի, Վրաստանի, Ալբանիայի և Իտալիայի միջոցով հասցնում է Եվրոպա, ևս ներգրաված է Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկը, ինչպես նաև ՎԶԵԲ-ը, Եվրոպական ներդրումային բանկը, Համաշխարհային բանկը և Ասիական զարգացման բանկը: Այս ծրագրի քննադատները մատնանշում են այն համայնքները, որոնք զրկվել են իրենց հողերից, ինչպես նաև այն, որ այս ծրագրով մեծ գումարների հոսք է տեղի ունեցել ոչ ժողովրդավար պետություններ, ինչպիսին է Ադրբեջանը: (CEE Bankwatch network, 2019)

Ասիական զարգացման բանկը ևս քննադատության է արժանացել իր ներդրումների սոցիալ-տնտեսական հետևանքներն անտեսելու համար, ինչպես օրինակ Կամբոջիայում երկաթուղու կառուցման ծրագրի հետևանքով աղքատության մատնված տեղահանված ընտանիքների դեպքում կամ Ինդոնեզիայում առողջապահական աջակցության ծրագիր իրականցնելիս, որի արդյունքներն, սակայն, այլ բան են վկայում: Այսպես, 2003թ-ի ասիական ֆինանսական ճգնաժամին Արժույթի միջազգային հիմնադրամը Ինդոնեզիային խորհուրդ էր տվել կրճատել պետության ծախսերը: Որպեսզի պետության ծախսերի կրճատումը բացասական չանդրադառնա առողջապահական համակարգի վրա, ինչպես սովորաբար լինում է նման հակաճգնաժամային մեխանիզմներ կիրառելիս, Ասիական զարցագման բանկն առողջապահական ոլորտի օգնության ծրագիր էր մշակել և հետագայում հայտարարել այդ ծրագրի հաջողության մասին: Սակայն, իրականում, թե՛ առողջապահական ծախսերը, թե՛ պատվաստված երեխաների քանակը, և թե՛ առողջապահական կենտրոններից օգտվողների քանակի նվազումն ու անգամ երեխաների մահացության թվի աճն այլ բաների մասին են վկայում: Եվ չնայած առողջապահական ծախսերի կրճատմանը՝ արտերկրի մասնավոր

ընկերությունները, որոնք, օգտվելով ծրագրից, իրենց սարքավորումներն էին վաճառել Ինդոնեզիային, այս կերպ իրենց ապահովել են մեծ եկամուտներ: (Սիմս, 2014) Հաշվի առնելով ասիական բանկերի միլիոնավոր դոլարների ծախսերը տարատեսակ ծրագրերում, միևնույն ժամանակ Ասիայի մոտ 4.5 միլիարդ բնակչությունից 1.2 միլիարդի՝ օրական 3 ԱՄՆ դոլարից էլ պակաս գումարով ապրելու փաստը, վերլուծաբաններն զգուշացնում են, որ ասիական բանկերը լուրջ մարտահրավերներ ունեն իրենց առջևում: (Խասրու, 2017)

Այնուամենայնիվ, այս հետազոտության մեջ ասիական բանկերի ներդրումներին քիչ անդրադարձը պայմանավորված է նրանով, որ այս բանկերի գործունեությունից տուժած համայնքների մասին համապարփակ հետազոտությունները դեռևս այնքան էլ շատ չեն, ինչպես, օրինակ, արևմտյան ֆինանսական ինստիտուտների պարագայում է: Մեկ այլ պատճառ էլ այս բանկերի՝ Հայաստանում ներգրավածության առայժմ համեմատաբար փոքր լինելն է: Պատճառներից մեկն էլ այն է, որ չնայած ֆինանսական ինստիտուտները որոշիչ դեր ունեն քաղաքականություններ մշակելու և դրանք շահառու պետություններին պարտադրելու գործում, ինչպես օրինակ, վարկերի տրամադրումն է ինստիտուցիոնալ և քաղաքականությունների բարեհաջող մշակման և իրագործման պայմանով (ինչն էլ թույլ է տալիս որոշ վերլուծաբանների եզրակացնել, որ այդ կերպ ֆինանսական ինստիտուտների խոշոր հովանավոր պետություններն իրենց քաղաքականություններն են թելադրում շահառու պետություններին), ի տարբերություն Համաշխարհային բանկի, օրինակ, Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի հիմնադիր Չինաստանի մոտեցումն այն է, որ ֆինանսներ տրամադրելիս այս բանկը չմիջամտի տվյալ երկրների քաղաքականությունների մշակման պրոցեսներին: (Քելի, 2019) Այնուամենայնիվ, նշված ասիական ֆինանսական ինստիտուտների չափանիշներն իրենց ընդհանրական, ոչ պարտադիր բնույթով առանձնապես չեն տարբերվում արևմտյան ֆինանսական ինստիտուտների չափանիշներից, (Քելի, 2019) և ուրեմն այս բանկերի ֆինանսավորած ծրագրերի՝ բնության և մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի վրա բացասական ազդեցությունների մասին առաջիկայում համապարփակ հետազոտություններ ևս կլինեն:

Ռուսական ֆինանսական ինստիտուտներ

Ինչ վերաբերում է ռուսական ֆինանսական ինստիտուտներին, ապա դրանք ևս անմասն չեն էներգետիկ ծրագրերում և հանածոների ոլորտում ներդրումներից, ինչպես, օրինակ, Սբերբանկի ներդրումները ԳեոՊրոՄայնինգ Գոլդ ընկերությունում, որն էլ իր հերթին շահագործում է Հայաստանի ամենամեծ ոսկու հանքը: Բանկն ընկերությանը տրամադրել է 250մլն դոլարի վարկ, ինչպես նաև հանդիսանում է ընկերության 31,47 տոկոս բաժնետեր: Միևնույն ժամանակ, այս բանկի 50 տոկոս +1 ձայնի իրավունքը Ռուսաստանի կենտրոնական բանկինն է: (Աղալարյան, Հետք, 2019)

Այս ծրագրում ևս առկա են ինչպես բնապահպանական, այնպես էլ աշխատանքային և առողջապահական ռիսկեր, քանի որ հանքի աշխատակիցներն անգամ խոստովանում են, որ պայթեցումներից ոչ միայն աղտոտվում է օդն, այլև ստորգետնյա ջրերը, որոնք ընկերությունը պոմպերով և խողովակներով մղում է մոտակա գետը, որն էլ, ի վերջո, թափվում է Սևանա լիճ:

Վերջինս ոռոգման աղբյուր է Հայաստանի բազմաթիվ գյուղերի և դաշտերի համար: Ջրերի հեռացման համար մաքրման կայանի կառուցումը մնում է չիրագործված: Ինչ վերաբերում է աշխատակիցների անվտանգությանն, ապա իրենք էլ խոստովանում են, որ բացահանքն այնպես է կառուցվել, որ տեխնիկայով աշխատելու պարագայում աշխատակիցները փլուզումների մտավախություններ ունեն, սակայն սխալները շտկելու փոխարեն, ընկերությունն աշխատանքից ազատում է խնդիրները բարձրաձայնող աշխատակիցներին: (Աղալարյան, Հետք, 2019) Հանքին հարակից ապրող տեղացիները նաև իրենց մտահոգություններն են հայտնում աղտոտված օդի հետևանքով ինչպես իրենց առողջության վիճակի, այնպես էլ գյուղատնտեսական հողերին հասցված վնասների շուրջ: (Էկոլուր, 2019)

Ինչ վերաբերում է Սոթքի ոսկու վերամշակմանն, ապա այն իրականացվում է հանքից մոտ 200կմ հեռու՝ Արարատյան դաշտում գտնվող Արարատի ոսկու հարստացուցիչ գործարանում, ուր ևս արձանագրվել են վթարները, արտահոսքերի հետևանքով կենդանիների թունավորման, տեղացիների այգիների աղտոտման դեպքեր, իսկ բնակիչները մտավախություններ են հայտնել իրենց առողջական վիճակի վատթարացման վերաբերյալ: (Medialab, 2017)

Այս ընկերության շահագործած մյուս՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում ևս աշխատակիցները բարձրաձայնել են աշխատանքային պայմաններից իրենց դժգոհությունները, (Ղազարյան, Հետք, 2019) իսկ բնապահպանները բազմիցս արձանագրել են կոմբինատի տարածքից թունավոր նյութերի արտահոսքի դեպքեր դեպի մոտակա գետը: (Medialab, 2017)

Այս ընկերությունը գործունեություն է ծավալում նաև Վրաստանում և Ռուսաստանում, ուր ևս արձանագրվել են իրականցված ծրագրերի հետևանքով տեղական օրենքների խախտման և հողի ու ջրի աղտոտման դեպքեր: (Medialab, 2017) Ու թեև ռուսական ֆինանսական ինստիտուտների և ընկերությունների ներդրումների հետևանքները, մասնավորապես, բնական ռեսուրսների ոլորտում չեն առանձնանում պատասխանատվությամբ, նրանց պատասխանատվության ենթարկելու լծակներն, այն էլ Ռուսաստանում ճնշված քաղաքացիական հասարակության պայմաններում, առայժմ դժվարամատչելի են:

Ո՞ր իրավունքներ են խախտվում ֆինանսական ինստիտուտների անպատասխանատու ներդրումների արդյունքում

Միջազգային ֆինանսական ինստիտուտների, պետությունների և կորպորացիաների համագործակցության հետևանքով, մասնավորապես այնպիսի ներդրումների պարագայում, ինչպիսիք քննարկվեցին այս հետազոտությունում՝ ներդրումներ էներգետիկ ծրագրերում (հանքեր, հէկ-եր, ջրամբարներ), ազդեցություններն ուղղակի և անուղղակի են, և վնասվում է ինչպես էկոհամակարգն, այնպես էլ դրանից անմիջական կախում ունեցող համայնքների և դրանցում բնակվողների իրավունքները: Սակայն առավել լայն բնակչությունը ևս կրում է բացասական ազդեցությունների հետևանքները, քանի որ ինչպես էկոհամակարգի վատթարացումն, այնպես էլ պարենի անվտանգության հարցը շատ ավելի մասշտաբային ազդեցություն ունեն:

Երբ պետությունները, ֆինանսական ինստիտուտները և կորպորացիաները առաջնորդվում են ծրագրի եկամտաբերության, տնտեսական աճի ցուցանիշներով, սակայն չեն իրականացնում այս ծրագրերի՝ էկոհամակարգի և բնակչության վրա հնարավոր դրական և բացասական ազդեցությունների հաշվարկներ և վերլուծություններ, ընդգծում են ծրագրի կարճաժամկետ օգուտները, սակայն չեն ուսումնասիրում ծրագրի երկարատև հետևանքները, չեն ապահովում ծրագրերի շուրջ որոշումների կայացման գործում բնակիչների մասնակցությունը, կամ մասնակցությունն ապահովելիս հաշվի չեն առնում նրանց կարծիքը, կամ ծրագրի իրագործման համար իրականացնում են բնակչության տեղահանում և անհամարժեք փոխհատուցում են տալիս, կամ խուսափում դրանից, կամ էլ թույլ են տալիս այլ խախտումներ, ինչպես վերը նշված օրինակներում, տուժում է ոչ միայն բնական միջավայրն, այլև դրա հետ սերտ փոխկապակցված մարդու այնպիսի իրավունքներ, ինչպսիք են մաքուր և անվտանգ ջրի, սննդի, բնակության վայրի, ֆիզիկական և հոգեբանական առողջության, հետևաբար նաև կյանքի և մի շարք այլ իրավունքներ:

Առողջության իրավունք

Այսպես, կանադական, ավստրալական հանքերի մասին ուսումնասիրությունների օրինակներով այս աշխատանքում քննարկվեցին հանքերի և հանքային քաղաքների կենսակերպի բացասական ազդեցությունները հոգեկան առողջության վրա, ինչպես նաև Ալավերդու, Ախթալայի և այլ օրինակներով քննարկվեցին հանքերի վնասակար ազդեցությունները նաև ֆիզիկական առողջության վրա հանքերի մոտ գտնվող համայնքների համար: Ներկայացվեց նաև հանքերում աշխատողների ֆիզիկական վնասների, ընդհուպ մինչև մահերի դեպքերի մասին համաշխարհային և հայաստանյան տվյալները: Առողջության և կյանքի իրավունքի ոլորտում պետության պարտավորությունների վերաբերյալ պետք է նշել, որ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային

դաշնագիրը, որին անդամակցում է նաև Հայաստանը, պետությունների համար սահմանում է այնպիսի իրավունքների պաշտպանության պարտավորություն, ինչպիսիք են՝ «յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունք» (հոդված 12): (Իրտեկ, 1966) Իսկ ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (այս դաշնագրին ևս Հայաստանն անդամակցում է) վեցերրորդ հոդվածն էլ սահմանում է յուրաքանչյուրի կյանքի իրավունքը: Ընդ որում, ֆիզիկական և հոգեկան առողջության իրավունքի ապահովման համար որպես ձեռնարկվող միջոց սահմանվում է շրջակա միջավայրի բարելավման, ինչպես նաև արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բարելավման պարտավորությունները: (Արլիս, 1966)

Բավարար կենսամակարդակի իրավունք

Առողջության իրավունքի հետ սերտ կապված է նաև բավարար կենսամակարդակի իրավունքը, որի խախտմանն անդրադարձ եղավ հանքերի կամ այլ էներգետիկ ծրագրերի հետևանքով միջավայրի աղտոտման, վատթարացման, ինչպես նաև ծրագրերի իրականացման նպատակով բնակիչների տեղահանման, անհամապատասխան փոխհատուցման դեպքերը քննարկելիս, ինչպես օրինակ Հնդկաստանում կամ Վրաստանում կառուցվող ամբարտակների և հիդրոէլեկտրակայանների, կամ Հայաստանում պոչամբարներին կից տարածքներում բնակվողների կենսապայմանների վատթարացման դեպքերում:

Մինչդեռ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը սահմանում է նաև «յուրաքանչյուրի՝ իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բավարար սննդի, հագուստ և բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների շարունակական բարելավման իրավունք» (հոդված 11): (Իրտեկ, 1966)

Քննարկված այնպիսի օրինակներում, ինչպիսիք էին Լոռու մարզում հանքերին կամ պոչամբարներին մոտ բնակավայրերում հողի նմուշառումը, Սյունիքի մարզում բանջարեղենների որակի ստուգումները, որոնց արդյունքում մետաղների բարձր կոնցենտրացիաներ են հայտնաբերվել, ինչպես նաև աղտոտված գետերի ջրով ոռոգված այգիներում ծառերի անպտղատվության դեպքերը ցույց են տալիս պետության կողմից նաև անվտանգ սննդի և ջրի իրավունքի պահպանման խնդիրները: Ընդ որում բավարար սննդի, հագուստի և բնակարանի, կենսապայմանների շարունակական բարելավման նպատակով որպես ձեռնարկվող միջոց ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը սահմանում է նաև պարենի անվտանգության ապահովումն, ինչպես նաև ջրի հասանելիությունը: Մասնավորապես, մաքուր և անվտանգ ջրի հասանելիությունը ճանաչվում է ինչպես առողջության, այնպես էլ բավարար կենսամակարդակի իրավունքի իրացման կարևոր բաղադրիչ: (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Կոմիտե, 2002)

Աշխատանքի իրավունք

Ուսումնասիրությունում անդրադարձ եղավ նաև աշխատանքային իրավունքների խախտման դեպքերին՝ մի դեպքում, երբ խախտվում են աշխատանքային անվտանգության կանոնները, ինչպես օրինակ Սոթքի ոսկու կամ Ագարակի պղնձամոլիբդենային հանքերում: Աշխատանքի խախտման մյուս օրինակն էլ այն է, երբ ֆերմերները, այգեգործները, ձկնաբույծները զրկվում են իրենց աշխատանքից և, հետևաբար, եկամուտից՝ մոտակայքում ծավալված էներգետիկ ծրագրերի և միջավայրի աղտոտման/վնասման հետևանքով: Ընդ որում ուսումնասիրություններն, օրինակ, հանքերում ստեղծված աշխատատեղերը չեն համեմատում հողագործության, այգեգործության և այլ նման աշխատանքների հետ՝ հաշվի առնելով հանքերի ոչ կենսակայուն և ժամանակավոր բնույթը:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը հոդված 6-ով սահմանում է աշխատանքի իրավունքը, մասնավորապես «յուրաքանչյուրի՝ իր ապրուստն իր ընտրած աշխատանքով վաստակելու, դրա անվտանգ և հիգիենիկ պայմանների հնարավորության իրավունքը:» (Իրտեկ, 1966)

Հարկ է ընդգծել, որ թեև այս իրավունքներն առանձին ենք քննարկում, այնուամենայնիվ, դրանք ոչ միայն սերտ կապակցված են միմյանց հետ, այլև փոխկապակցված են նախևառաջ բնապահպանության հետ:

Տեղեկացված լինելու, որոշումների կայացմանը մասնակցելու, խտրականությունից զերծ լինելու իրավունքներ

Քննարկված օրինակներում, ինչպես Ամուլսարում ոսկու հանքի կամ Քաղցրաշենի ոռոգման ծրագրերն են, համայնքները նաև բարձրաձայնում են այնպիսի խնդիրներ և իրավունքների խախտումներ, ինչպիսիք են համայնքների հետ խորհրդակցելու պակասը կամ նրանց կարծիքի հաշվի չառնելը, ինչը հանգեցրել է ընդհուպ մինչև բնակիչների կողմից այդ ծրագրերի ֆիզիկական խոչընդոտմանը՝ իրենց իրավունքները պաշտպանելու, ձայնը լսելի դարձնելու նպատակով:

Այս իրավունքներն ամրագրված են շրջակա միջավայրի մասին տեղեկատվության հասանելիության և որոշումներում հանրության ընդգրկման մասին Օրհուսի կոնվենցիայով (որին ևս Հայաստանն անդամակցում է) և ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով: Կոնվենցիան և դաշնագրի մասնավորապես հոդված 25-ը նախատեսում են ինչպես յուրաքանչյուրի իրավունքը մասնակցելու պետական գործերին, (Արլիս, 1966) այնպես էլ բնական միջավայրի վրա ազդող ծրագրերի պարագայում տեղեկացված լինելու և որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու հանրության իրավունքը: (UNECE, 1998)

Ավելին. Քաղցրաշենի ծրագիրը առաջ է բերում նաև խտրականությունից զերծ լինելու իրավունքը, քանի որ այս և այլ ծրագրերը, որոնց իրագործումը բխում է մի համայնքի շահերից, սակայն վնասում է մյուս համայնքի շահերին, կամ, երբ մի համայնքում իրագործված ծրագիրը մեծ եկամուտներով է ապահովում մի քանի անհատներին և կորպորացիաներին, իսկ այդ համայնքները ոչ միայն չեն զարգանում, այլև տեղահանվում են կամ մնում են աղտոտված միջավայրում, կամ էլ, երբ ծրագրերից տուժում են փոքրամասնությունները, բնիկ

ժողովուրդները, կանայք և այլն, ինչպես Հնդկաստանում իրագործված զարգացման ծրագրերի պարագայում, բոլոր այս և նման դեպքերում խտրականության դրսևորման հետ գործ ունենք, ինչը, սակայն, ևս արգելված է մի շարք միջազգային օրենքներով, ինչպես օրինակ ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի հոդված 26-ով: (Արլիս, 1966)

Կանանց իրավունքներ

Ուսումնասիրությունում նշվեց նաև էներգետիկ ներդրումների հետևանքով կանանց տնտեսական իրավունքների խախտման դեպքեր, երբ միջավայրի աղտոտվածության հետևանքով, օրինակ, այգեգործությամբ զբաղվողները, հիմնականում կանայք, զրկվում են իրենց եկամտի աղբյուրից, մյուս կողմից էլ կախվածություն են ձեռք բերում, օրինակ, հանքերում աշխատող՝ իրենց ամուսիններից, ինչն էլ իր բացասական հետևանքները կարող է ունենալ նաև կանանց հոգեկան առողջության վրա, ինչպես նշվեց ավստրալական մի քանի հանքային քաղաքների ուսումնասիրությունում: Նման ծրագրերը, հետևաբար, խոչընդոտում են պետություններին՝ իրենց ստանձնած պարտավորությունների իրականացմանը, ինչպես սահմանված է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (որին Հայաստանը միացել է 1993թ-ին), որի հոդված 3-ը պետությունների համար պարտավորություն է սահմանում քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում ձեռնարկելու քայլեր՝ կանանց լիարժեք զարգացումն ու առաջադիմությունն ապահովելու և տղամարդկանց հետ հավասար մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելու համար: (ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար, 1979)

Այլ իրավունքներ

Այս հետազոտության մեջ քննարկված ներդրումային ծրագրերից տուժած անհատների և համայնքների առավել մանրամասն ուսումնասիրությունը նորանոր իրավունքների խախտումներ կբացահայտի, ինչպես, օրինակ, բնիկ ժողովուրդների իրավունքների խախտման դեպքեր, երբ հէկ-երի կառուցման կամ հանքերի շահագործման հետևանքով բնիկները, չունենալով ամրագրված սեփականություն, տեղահանվում են, կամ էլ ստիպված են լքում՝ միջավայրի աղտոտման հետևանքով: Նման ներդրումային ծրագրերը նաև մշակութային իրավունքների խախտման պատճառ են դառնում, երբ, օրինակ, ամբարտակներ կամ պոչամբարներ կառուցելիս պատմամշակութային կոթողները մնում են ջրի կամ պոչանքների տակ՝ այդ կերպ նաև զրկելով տեղացիներին զարգացնելու տուրիզմը և ստեղծելու այլընտրանքային եկամուտների աղբյուրներ: Համայնքների տեղահանումից, տուժում են նաև, երեխաները, ում կրթության կամ սոցիալ-առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքներն ընդհատվում են: Առավել համապարփակ ուսումնասիրման պարագայում, թերևս, հնարավոր է նորանոր իրավունքների ոտնահարման դեպքեր արձանագրել:

Քաղաքականության մշակման մեխանիզմներ ի նպաստ պետությանն ու բնությանը

Այս հետազոտությունում ներկայացված բազմաթիվ օրինակները վկայում են այն մասին, որ թեև բացի պետություններից, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա մեծապես ազդում են նաև մասնավոր ընկերությունները և ֆինանսական ինստիտուտներն, այնուամենայնիվ, դեռևս չեն մշակվել և իրագործվել մեխանիզմներ, որոնք իրավախատումների կամ բնական միջավայրի աղտոտման դեպքում պետությունից բացի պատասխանատվության կենթարկեն նաև նշված մյուս դերակատարներին: Այնուամենայնիվ, իրականացվում են քայլեր՝ մասնավոր հատվածին ևս իրավունքների պաշտպանության և բնապահպանության ոլորտում հաշվետու դարձնելու համար: Այս կապակցությամբ ՄԱԿ-ի կողմից 2011թ-ին ընդունվեց Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջոն Ռագիի՝ Բիզնեսի և մարդու իրավունքների մասին (դեռևս ոչ պարտադիր) առաջնորդող սկզբունքները, որոնք մի կողմից ընդգծում են մարդու իրավունքների պաշտպանության պետության պարտավորությունը, այդ թվում նաև երրորդ կողմից՝ մասնավոր հատվածից, մյուս կողմից էլ մասնավոր հատվածին հորդորում են հարգել մարդու իրավունքները: (ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար, 2011)

Այս աշխատանքում ուսումնասիրված օրինակները ցույց են տալիս նաև, որ քիչ չեն դեպքերը, երբ պետություններն իրենք են համագործակցում մասնավոր հատվածի հետ և, օգտագործելով իրենց լծակներն, այդ թվում դիվանագիտական, առաջ են մղում իրենց ներդրումային ծրագրերն ու շահերն՝ ի վնաս այլ պետությունների բնության և բնակչության շահերին: Ավելին, վերլուծաբանները մտավախություններ են հայտնում, որ այն ֆինանսական ինստիտուտներում, ուր մեծ ազդեցություն ունի որևէ մի երկիր, վտանգ է առաջանում այդ երկրի քաղաքական օրակարգի պարտադրումն այն երկրներում, ուր այդ ֆինանսական ինստիտուտները կատարում են ներդրումներ:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ հատկապես զարգացող պետությունները ներդրումները դիտարկում են որպես իրենց սոցիալական և տնտեսական բոլոր խնդիրների լուծում, և պատրաստ են ցանկացած պայմանով ներգրավել ներդրումներ, անգամ եթե այդ ներդրումային ծրագրերը չեն բխում տեղացիների շահերից և կամ երկարաժամկետ կտրվածքով լի են բացասական հետևանքներով:

Հաշվի առնելով, որ Հայաստանում ևս, ինչպես 2018թ-ին տեղի ունեցած քաղաքական իրադարձություններից առաջ, այնպես էլ դրանցից հետո ներդրումները դիտարկվում են սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման լավագույն գործիք, իսկ պետական պարտքը կազմում է ՀՆԱ-ի մոտ 51 տոկոսը (չնայած 2020թ-ին ծրագրվում է այս թիվը հասցնել 48.2 տոկոսի), (Հերգնյան, 2019) այսօր պետությունը ստիպված է բյուջեից ավելի շատ գումար

հատկացնել նախկինում գոյացած պարտքերի տոկոսները մարելու, քան առողջապահության, կրթության և այլ ոլորտների համար: (Հերգնյան, Հետք, 2019)

Ուստի կենսակայուն քաղաքականությունների մշակման համար աշխատության այս բաժնում ներկայացնում ենք քայլեր, որոնք անհրաժեշտ են ոչ միայն ներկայիս սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, այլև հետագա սերունդներին ևս առողջ և անվտանգ միջավայրի և իրավունքների լիարժեք իրագործման մթնոլորտ ապահովելու համար:

Քաղաքականություններ պետության համար՝

- Ցանկացած ծրագրի, հատկապես էներգետիկ և բնական ռեսուրսների ծրագրերի ֆինանսավորմանը հավանություն տալուց առաջ նախ իրականացնել սոցիալ-տնտեսական գնահատում ինչպես ծրագրի օգուտների, այնպես էլ բնակչության և բնության վրա ուղղակի և անուղղակի բացասական ազդեցությունների մասին՝ այս կերպ պարզելով նման ծրագրերի կարճաժամկետ և երկարաժամկետ օգուտներն ու վնասները բնության, տնտեսության, առողջապահության և այլ ոլորտներում: Միևնույն ժամանակ, իրավապաշտպանների, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի մասնակցությամբ էլ ուսումնասիրել ծրագրի հնարավոր ազդեցությունները մարդու իրավունքների վրա՝ իրավախախտումները և պետության պարտավորությունների իրագործման խոչընդոտները կանխելու նպատակով:
- Ներդրումային ծրագրեր մշակելիս կամ հավանություն տալիս բնապահպանական և մարդու իրավունքների չափանիշները հաշվի առնելուց զատ ավելացնել լրացուցիչ չափանիշներ, որոնք ուշադրություն կդարձնեն ծրագրի՝ աղքատության հաղթահարման, գենդերային արադության և կլիմայական փոփոխությունների մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիներ կպարունակեն: Նման չափանիշների մշակման մեխանիզմներ է առաջարկում, օրինակ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի համատեղ մշակած Աղքատություն-Բնապահպանություն նախաձեռնությունը՝ առաջարկելով աղքատության հաղթահարումը և բնապահպանությունը մշտապես ընդգրկել տնտեսական ոլորտում քաղաքականությունների մշակման գործընթացներում: Նման չափանիշների կիրառումը կարևոր է դիտարկվում ոչ միայն պետության իրականացրած ծրագրերում, այլ նաև պետության կողմից պետք է առաջադրվի մասնավոր սեկտորին՝ վերջինիս գործունեության մեջ ներառելու նպակատով: (Կեմպֆ, 2018)
- Պետությունը պետք է շարունակաբար ձգտի բազմազանացնել վերականգնվող էներգիայի աղբյուրները՝ ձգտելով կիրառել միջավայրի համար անվնաս և կենսակայուն տարբերակները՝ միևնույն ժամանակ վերահիմաստավորելով նախկինում վերականգնվող էներգիայի աղբյուր համարվող այնպիսի տեսակները, որոնք այսօր արդեն բազմաթիվ քննադատությունների են արժանանում, ինչպես օրինակ հէկ-երի պարագայում է:

- Ներդրումային ծրագրեր մշակելու ընթացքում և հաստատելուց առաջ մշտապես ապահովել հանրային մասնակցությունը և հաշվի առնել հանրային կարծիքը որոշումների կայացման ընթացքում: Այս նպատակով անհրաժեշտ է համայնքներում ապահովել տեղեկատվության հասանելիությունը ինչպես նոր տեխնոլոգիաների օգնությամբ (համայնքապետարանի կայքում և սոցիալական էջերում տեղեկատվության տեղադրում, առցանց լրատվամիջոցներով տարածում), այնպես էլ հին մեթոդների կիրառմամբ՝ բնակիչների ծանուցում, տեղական թերթերում հրապարակում, հեռուստացույցով հայտարարում: Իսկ ահա բնակչության մասնակցության ապահովման և կարծիքը հաշվի առնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել ինչպես ենթակառուցվածքների առկայությունը (օրինակ, քննարկումների համար համապատասխան մեծության սրահ), այնպես էլ բնակիչների համար հետադարձ կապի հասանելիությունը (հարցերի, առաջարկների համար), ծրագրերի շուրջ քվեարկելու հնարավորությունը և այլն:
- Իրագործվող ծրագրերի շուրջ հանրությանը ներկայացնել հաշվետվություններ ինչպես պետական բյուջեից կատարված ծախսերի, այնպես էլ համայնքային հողատարածքներում իրականացվող ծրագրերի շուրջ: Միևնույն ժամանակ մշակել և ավելացնել կենսաբազմազանությամբ հարուստ տարածքների պահպանվող գոտիները՝ ձգտելով դրանք զերծ պահել զարգացման ծրագրերից:
- Բնական միջավայրի աղտոտման կամ բնական միջավայրին հասցրած վնասների համար բացի բարձր տուգանքներ սահմանելուց, անհրաժեշտ է նաև ուժեղացնել վերահսկողությունը և ամրապնդել բնական միջավայրի մոնիթորինգային մարմինների, տեսչությունների գործունեությունը:
- Ներդրումային համաձայնագրերում պետությունը պետք է խուսափի հարկային այնպիսի լայն արտոնություններ և խթաններ սահմանելուց, որոնք ֆինանսական ինստիտուտներին և ընկերություններին գերշահույթ ապահովելով՝ պետությանը թողնում են աղտոտված/վնասված միջավայր, աղքատացած համայնքներ և պետական պարտքի ավելացած բեռ: Նման հարկային արտոնություններից են, օրինակ, հարկային արձակուրդները, հարկաբյուջետային կայունացման դրույթները. վերջիններս ներառելով պայմանագրերում՝ ներդրողները պաշտպանում են իրենց քաղաքական, օրենսդրական ռիսկերից, որպեսզի, երբ, ապագայում օրենքների հնարավոր փոփոխություններ լինեն, դրանք չունենան ազդեցություն ներդրումային ծրագրի վրա: Սակայն այս դրույթի կիրառումը կարող է խոչընդոտ դառնալ պետության՝ մարդու իրավունքների և բնության պահպանության իր պարտավորություններն իրագործելու համար:
- Ֆինանսական ինստիտուտների հետ բոլոր ֆինանսական պայմանավորվածությունները պետք է համաձայնեցվեն նաև խորհրդարանի հետ:
- Պետությունը պետք է նաև վարքի նորմեր մշակի պետական ծառայողների, այդ թվում քաղաքական և դիվանագիտական գործիչների համար՝ կանխելու որևէ ներդրումային ծրագրի հետ վերջիններիս շահերի բախումը՝ սահմանելով, օրինակ մի քանի տարվա «սառեցման» ժամկետ, որից հետո միայն կարելի է ստանձնել շահերի բախմանը չհանգեցնող պաշտոն:

Քաղաքականություններ մասնավոր սեկտորի (ֆինանսական ինստիտուտների, ընկերությունների) համար՝

- Բիզնես նախագծեր կազմելիս և ֆինանսավորելիս առաջնորդվել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջոն Ռագիի՝ Բիզնեսի և մարդու իրավունքների մասին առաջնորդող սկզբունքներով, որոնք համապատասխան քայլեր են առաջարկում ծրագրեր իրականացնելիս մարդու իրավունքները հարգելու և պետությանը՝ այս ոլորտում իր ստանձնած պարտավորությունների իրագործմանը չխոչընդոտելու համար:
- Թարմացնել և բարելավել սեփական չափանիշները՝ ներառելով վերը նշված Ռագիի սկզբունքներն ընկերությունների և բանկերի հռչակած չափանիշներում:
- Խուսափել կենսաբազմազանությամբ հարուստ տարածքներում ծրագրեր ֆինանսավորելուց և իրագործելուց, ինչն անդառնալի կորուստ կարող է պատճառել ինչպես տվյալ երկրի էկոլոգիայի, այնպես էլ համաշխարհային մասշտաբով կլիմայի համար:
- Ծրագրեր ֆինանսավորելիս գործել թափանցիկ, նաև հասանելի դարձնել տեղեկատվությունն այն կոմերցիոն բանկերի մասին, որոնց միջոցով ծրագրերը ֆինանսավորվում են:
- Իրականացնել անկախ հետազոտություն և արձանագրել ֆինանսավորած ծրագրերի ոչ միայն դրական, այլև բացասական արդյունքներն՝ այս կերպ տուժածներին հասանելի դարձնելով հատուցում, իսկ ապագա ծրագրերի համար շտկելով բացթողումները:
- Ծրագրեր ֆինանսավորելիս՝ զերծ մնալ տնտեսական նախապայմաններ առաջադրելուց և այս կերպ պետությունների՝ քաղաքականություններ ինքնուրույն մշակելու իրավունքը խարխլելուց:
- Քաջալերել տնտեսության դիվերսիֆիկացիա և ֆինանսավորել կենսակայուն նախագծեր:
- Պետական կառույցների հետ համագործակցությամբ ապահովել ծրագրերում տեղական համայնքների և քաղհասարակության ինչպես լիարժեք մասնակցությունն, այնպես էլ հաշվի առնել նրանց կարիքն ու զեկույցները:
- Պարտադիր դարձնել ծրագրից ստացած եկամուտներից տեղական համայնքներին մասնաբաժին հատկացնելը:
- Ծրագրի ֆինանսավորումը տրամադրել միայն միջավայրի վրա բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մասին գնահատականին տեղացիների, քաղհասարակության ներկայացուցիչների և ազգային մասնագետների համաձայնություն տալուց հետո: Իսկ ծրագրի իրականացման ընթացքում մշտադիտարկել ծրագրի ազդեցությունը բնական միջավայրի և մարդու իրավունքների վրա:
- Ընդունելով, որ յուրաքանչյուր պետություն առանձին և յուրահատուկ մշակութային ժառանգության կրող է, իսկ որոշ պետություններ էլ կրում են մեկից ավելի մշակութային,

էթնիկական ժառանգություն՝ նախատեսվող ծրագրերի համար իրականացնել առանձին ուսումնասիրություն՝ պարզելու յուրաքանչյուր պետության և այդ պետությունում բնակվող ազգությունների վրա այդ ծրագրերի նաև մշակութային ազդեցությունը և ձգտել խուսափել նրանց նաև մշակութային ժառանգությունը վնասելուց:[1]

[1] Որոշ առաջարկներ հիմնված են Անդրազգային կորպորացիաների գծով հետազոտական կենտրոնի՝ Մոնղոլիայի վերաբերյալ կատարած հետազոտությունների և բացահայտումների հիման վրա արած ռեկոմենդացիաների վրա: (SOMO, OT Watch, 2020)

Հղումներ

Balkan Green Energy News. (20 մարտ, 2018). Առբերված է https://balkangreenenergynews.com/study-who-financing-hydropower-projects-in-protected-areas-in-southeast-europe/-ից

Bank Information Center. (2013). Առբերված է https://bankinformationcenter.org/en-us/update/world-bank-ebrd-approve-destructive-oyu-tolgoi-mining/-ից

Bankwatch network. (2019). Առբերված է https://bankwatch.org/project/amulsar-gold-mine-armenia-ից

BrettonWoods Project. (2019). *ՀԲ-ի և ՄՖԿ-ի հասցեին ուղղված հիմնական քննադատությունները.* Առբերված է https://www.brettonwoodsproject.org/2019/06/what-are-the-main-criticisms-of-the-world-bank-and-the-imf/-ից

Business & Human Rights Resource Center . (25 սեպտեմբեր, 2017). Առբերված է https://www.business-humanrights.org/en/armenia-environmentalists-urge-govt-private-intl-financial-institutions-to-stop-supporting-amulsar-gold-mine-operated-by-lydian-international-over-health-climate-concerns-ից

CEE Bankwatch network. (2014). Առբերված է https://bankwatch.org/wp-content/uploads/2014/05/EBRD-stuck-in-market.pdf-ից

CEE Bankwatch network. (2014). Առբերված է https://bankwatch.org/project/mining-boom-in-mongolia-ից

CEE Bankwatch network. (13 նոյեմբեր, 2018). Առբերված է https://bankwatch.org/press_release/eib-to-weaken-accountability-mechanism-despite-civil-society-criticism-ից

CEE Bankwatch network. (2019). Առբերված է https://bankwatch.org/project/hydropower-development-georgia-ից

CEE Bankwatch network. (2019). Առբերված է https://bankwatch.org/project/nenskra-hydropower-plant-georgia-ից

CEE Bankwatch network. (2019). Առբերված է https://bankwatch.org/project/southern-gas-corridor-euro-caspian-mega-pipeline-ից

CEE Bankwatch network, Counter Balance. (2016). Առբերված է https://euagenda.eu/upload/publications/untitled-63391-ea.pdf-ից

Compliance Advisor Ombudsman. (2014). Առբերված է http://www.cao-ombudsman.org/cases/case_detail.aspx?id=222-ից

Counter Balance. (29 սեպտեմբեր, 2017). Առբերված է http://www.counter-balance.org/wp-content/uploads/2017/09/Executive-Summary_Joint-CSO-submission_EIB-CM_Sept-2017.pdf-ից

European Bank for Reconstruction and Development. (19 մայիս, 2016). Առբերված է https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/lydian-amulsar-gold-mine-extension.html-ից

European Bank for Reconstruction and Development. (2019). Առբերված է https://www.ebrd.com/our-values.html-ից

inclusive development international. (2016). Առբերված է http://www.inclusivedevelopment.net/new-report-reveals-the-world-banks-murky-financial-entanglements-with-indias-most-irresponsible-corporations/-ից

inclusive development international. (2017). Առբերված է https://www.inclusivedevelopment.net/wp-content/uploads/2017/03/Outsourcing-Development-Part-3-1.pdf-ից

Inclusive Development International. (2017). Առբերված է https://www.inclusivedevelopment.net/campaign/guinea-anglogold-ashanti-mine-forced-evictions/-ից

Inspection panel. (2016). *Ստուգող խորհրդի հաշվետվությունը և առաջարկությունները.* https://www.inspectionpanel.org/sites/www.inspectionpanel.org/files/ip/PanelCases/106-%D5%8D%D5%BF%D5%B8%D6%82%D5%A3%D5%B8%D5%B2%20%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%AB%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8%20%D6%87%20%28%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6%29.pdf

International Rivers. (2006). Առբերված է https://www.internationalrivers.org/resources/big-dams-bringing-poverty-not-power-to-africa-2006-ից

Medialab. (19 մայից, 2017). Առբերված է Մեդիալաբ: https://medialab.am/14964/-ից

SOMO, OT Watch. (2020). Առբերված է https://www.somo.nl/undermining-mongolia/-ից

The World Counts. (2019). Առբերված է https://www.theworldcounts.com/challenges/planet-earth/mining/health-effects-of-mining-ից

UNECE . (1998). Առբերված է https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/ACtext/Aarhus_Convention_Armenian.pdf-ից

Աղալարյան, Ք. (14 December, 2015). *Հետք*. Առբերված է https://hetq.am/hy/article/64789-ից

Աղալարյան, Ք. (19 հունիս, 2019). Առբերված է Հետք: https://hetq.am/hy/article/104582-ից

Ամփոփ. (04 Սեպտեմբեր, 2019). Առբերված է https://ampop.am/mineral-industry-of-armenia/-ից

Աշեր, Ք. (03 December, 2018). *Pacific Standard*. Առբերված է https://psmag.com/environment/the-heavy-costs-of-hydroelectric-dams-ից

Ավանեսով, Ա. (29 մարտ, 2017). Առբերված է https://finport.am/full_news.php?id=29069&lang=1-ից

Արլիս. (1966). Առբերված է https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500-ից

Արմենպրես. (29 մարտ, 2004). Առբերված է https://armenpress.am/arm/news/399571.html-ից

Բիստրյանսկի, Մ. (2018). *Ծանր մետաղները Հայաստանի Լոռու մարզի հանքարդյունաբերական և մետալուրգիական օբյեկտների շրջակայքում.* Երևան, Պրահա. Առբերված է https://www.ecolur.org/files/uploads/armeniaheavymetalsajweb.pdf-ից

Գիբսոն, Ջ., & Քլինք, Ջ. (2005). Canada's Resilient North: The Impact of Mining on Aboriginal Communities. Առբերված է http://caid.ca/JAICH2005v3n1p115.pdf-ից

Գրիգորյան, Ա. (2013). *The impact of mining sector on growth, inequality, and poverty: Evidence from Armenia.* AUA Acopian Center for the Environment and College of Business and Economics. Առբերված է https://newsroom.aua.am/files/2013/04/mining_grigoryan.pdf-ից

Գրիգորյան, Ա. (19 մայիս, 2014). Առբերված է Հետք: https://hetq.am/hy/article/54657-ից

Դաունինգ, Թ. (April, 2002). *Mining, Minerals and Sustainable Development*. Առբերված է https://pubs.iied.org/pdfs/G00549.pdf-ից

Էկոլուր . (22 Հունիս, 2016). Առբերված է https://ecolur.org/hy/news/energy/-/8355/-ից

Էկոլուր. (28 հունիս, 2013). Առբերված է https://ecolur.org/hy/news/mining/ambassadors-of-uk-k-and-usa-in-armenia-to-visit-amulsar/5015/-ից

Էկոլուր. (01 փետրվար, 2014). Առբերված է https://ecolur.org/hy/news/quotecolurquot-press-club/--kfw-/5766/-ից

Էկոլուր. (01 Հունիս, 2015). Առբերված է https://www.ecolur.org/hy/news/mining/---/7358/-ից

Էկոլուր. (06 դեկտեմբեր, 2016). Առբերված է https://ecolur.org/hy/news/mining/environmetal-activists-called-for-ameria-bank-to-refrain-from-funding-amulsar-project-photos/8728/-ից

Էկոլուր. (28 մարտ, 2017). Առբերված է https://ecolur.org/hy/news/sos/----------/9018/-ից

Էկոլուր. (14 օգոստոս, 2019). Առբերված է https://ecolur.org/hy/news/amulsar/--/11418/-ից

Էկոլուր. (24 մայիս, 2019). Առբերված է https://ecolur.org/hy/news/amulsar/--/11151/-ից

Էկոլուր. (4 հոկտեմբեր, 2019). Առբերված է https://ecolur.org/hy/news/amulsar/--ebrd-/11625/-ից

Էկոլուր. (31 մայիս, 2019). Առբերված է https://ecolur.org/hy/news/mining/---/11165/-ից

Էկոնյուզ. (26 Հունվար, 2019). Առբերված է https://econews.am/?p=10563&l=am-ից

Իրտեկ. (1966). Առբերված է http://www.irtek.am/views/act.aspx?aid=37347-ից

Լյախով, Պ. (3 սեպտեմբեր, 2018). Առբերված է open Democracy: https://www.opendemocracy.net/en/odr/the-saga-of-amulsar/-ից

Խասրու, Ս. Մ. (04 մայիս, 2017). Առբերված է South China Morning Post: https://www.scmp.com/comment/insight-opinion/article/2092671/50-years-asian-development-bank-must-move-times-ից

Կեմպֆ, Ի. (2018). Առբերված է https://www.un.org/development/desa/dspd/wp-content/uploads/sites/22/2018/05/9.pdf-ից

Հակոբյան, Ք., Մելքումյան, Ծ., Գրիգորյան, Ռ., & Պետրոսյան, Վ. (2014). *Բնապահպանական ռիսկի մանրամասն գնահատում Հայաստանի 11 համայնքներում.* Առբերված է https://chsr.aua.am/files/2015/01/TRA-report-_ARMwebpage-June_2015.pdf-ից

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն. (2013). Առբերված է https://ace.aua.am/aua-study-mining-in-armenia-creates-poverty-income-inequality/-ից

Համաշխարհային բանկ. (2019). Առբերված է http://documents.worldbank.org/curated/en/523501552357219076/pdf/armenia-cpf-fy19-fy23-february-27-final-update-3-4-19-03062019-636876792405788612.pdf-ից

Հայկական բնապահպանական ճակատ. (16 նոյեմբեր, 2015). Առբերված է http://www.armecofront.net/mamlo-haghordagrutyunner/poqr-hek-ery-chen-vnasum/-ից

Հետք. (17 հոկտեմբեր, 2018). Առբերված է https://hetq.am/hy/article/82745-ից

Հերզնյան, Ս. (20 դեկտեմբեր, 2019). Առբերված է Հետք: https://hetq.am/hy/article/111329-ից

Հերզնյան, Ս. (07 հոկտեմբեր, 2019). Առբերված է Հետք: https://hetq.am/hy/article/108294-ից

Հիքլ, Ջ. (23 September, 2015). *The Guardian*. Առբերված է https://www.theguardian.com/global-development-professionals-network/2015/sep/23/developing-poor-countries-de-develop-rich-countries-sdgs?fbclid=IwAR1vYKLJwpbUrtTceDpOb6O9vbaxKC2f7mLYDZiWXjn71gIk74FLHu6uf00#maincontent-ից

Հուի, Ն. (2019). *China Dialogue*. Առբերված է https://www.chinadialogue.net/article/show/single/en/11361-Few-options-left-for-local-communities-opposing-Ecuador-s-largest-copper-mine-ից

Ղազարյան, Դ. (10 հուլիս, 2019). Առբերված է Հետք: https://hetq.am/hy/article/105459-ից

Ղազարյան, Դ. (17 հունվար, 2020). *Հետք*. Առբերված է https://hetq.am/hy/article/112171?fbclid=IwAR2rtG8Vj4GGqetsMES8FhQ_ASMpLhu0vNyXTIH6JLFNW11KopCFr0jkgaM-ից

ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիա. (2019). *New GM briefing note: land degradation, poverty and inequality.* UNCCD. Առբերված է https://www.unccd.int/news-events/new-gm-briefing-note-land-degradation-poverty-and-inequality-ից

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար. (2011). Առբերված է https://www.ohchr.org/documents/publications/guidingprinciplesbusinesshr_en.pdf-ից

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ. (առանց ամսաթվի). Առբերված է https://www.ohchr.org/EN/Issues/Development/IEDebt/Pages/HRightsAndForeignDebt.aspx-ից

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար. (1979) Առբերված է https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/cedaw.aspx

Մեդիա կենտրոն. (24 մայիս, 2016). Առբերված է https://www.media-center.am/hy/1464097774-ից

Մեդիամաքս. (15 նոյեմբեր, 2012). Առբերված է https://banks.am/am/news/newsfeed/7544-ից

Մխիթարյան, Ի. (05 Հուլիս, 2019). *Chai Khana*. Առբերված է https://chai-khana.org/hy/story/846/armenian-miners-5050-life-ից

Մկրտչյան, Մ. (10 հոկտեմբեր, 2018). Առբերված է Arminfo: https://arminfo.info/full_news.php?id=35510&lang=1-ից

Մումբայի բանաձև. (23 հունիս, 2018). Առբերված է https://www.cenfa.org/wp-content/uploads/2018/06/Mumbai-Resolution-of-the-Peoples-Convention-on-Infrastructure-Financing.pdf-ից

Յովանովիչ, Ս. (26 հունիս, 2018). Առբերված է Balkan Green Energy News: https://balkangreenenergynews.com/petition-handed-to-ebrd-calling-on-ifis-to-drop-destructive-hydropower-in-the-balkans/-ից

Շարմա, Ս. (2010). *Impact Assessment and Project Appraisal*. Առբերված է https://www.tandfonline.com/doi/pdf/10.3152/146155110X12772982841041?needAccess=true-ից

Չավկին, Ս., Հոլման, Բ., Հադսոն, Մ., Գալեգո, Ս., & Շիֆլետ, Շ. (15 Ապրիլ, 2015). Առբերված է Հաֆինգթոն փոսթ: http://projects.huffingtonpost.com/projects/worldbank-evicted-abandoned-ից

Չեդուիկ, Վ. (13 հունվար, 2020). Առբերված է devex: https://www.devex.com/news/eib-president-warns-against-box-ticking-on-climate-investments-96326-ից

Պանորամա. (15 հունիս, 2019). Առբերված է https://www.panorama.am/am/news/2019/06/15/%D5%A4%D5%AA%D5%A2%D5%A1%D5%AD%D5%BF-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80/2128448-ից

Պանորամա. (10 Սեպտեմբեր, 2019). Առբերված է https://www.panorama.am/am/news/2019/09/10/%D4%B4%D5%A1%D5%BE%D5%AB%D5%A9-%D5%8A%D5%AB%D5%BA%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6/2163998-ից

Պանորամա. (14 դեկտեմբեր, 2019). Առբերված է https://bit.ly/30gBfqb-ից

Պետրլիկ, Ժ., & Ստրակովա, Ժ. (2019). *Կայուն օրգանական աղտոտիչները (ԿՈԱ) Ալավերդու հավերի ձվերում, Հայաստան.* Երևան, Պրահա. Առբերված է https://www.ecolur.org/files/uploads/armeniaeggreportajweb.pdf-ից

Պետրոսյան, Ս. (16 մայիս, 2016). Առբերված է Հետք: https://hetq.am/hy/article/67977-ից

Պիպոյան, Դ., Ստեփանյան, Ս., Ստեփանյան, Ս., Բեգլարյան, Մ., & Մերենդինո, Ն. (2019). *Health Risk Assessment of Potentially Toxic Trace and Elements in Vegetables Grown Under the Impact of Kajaran Mining Complex.* Biological Trace Element Research. Առբերված է http://cens.am/uploads/pdf/cens-article-0080.pdf-ից

Ռոուլի, Թ. (07 սեպտեմբեր, 2019). Առբերված է Հետք: https://hetq.am/hy/article/107089-ից

Սթյուարտ, Ա. (2019). *Environmental Geochemistry and Health*. Առբերված է https://link.springer.com/article/10.1007/s10653-019-00367-7-ից

Սիմս, Ք. (03 մարտ, 2014). Առբերված է The Guardian: https://www.theguardian.com/global-development/poverty-matters/2014/mar/03/asian-development-bank-failing-protect-poor-vulnerable-ից

ՎանՔլիֆ, Մ. Ա. (2016). *Indiana University*. Առբերված է https://www.repository.law.indiana.edu/cgi/viewcontent.cgi?article=1615&context=ijgls-ից

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Կոմիտե. (2002). Առբերված է https://www.globalhealthrights.org/instrument/cescr-general-comment-no-15-the-right-to-water/-ից

Ռիչ, Բ. (12 ապրիլ, 2019). Առբերված է openDemocracy: https://www.opendemocracy.net/en/oureconomy/the-world-banks-legacy-of-environmental-destruction-a-case-study/-ից

Փրեդ, Դ., & Բուգալսկի, Ն. (23 հունիս, 2017). Առբերված է Հաֆինգթոն փոսթ: https://www.huffpost.com/entry/the-world-banks-existenti_b_10607498?fbclid=IwAR31qisoL8TXNxdCqqt6kJrfsUHvEFo8oionUdkBhNKpXefWQv-0cD2z7rc&guccounter=2-ից

Քելի, Ք. Դ. (26 փետրվար, 2019). Առբերված է Charged Affairs: https://chargedaffairs.org/chinas-asian-infrastructure-investment-bank-the-end-to-the-u-s-status-quo/-ից

Օփերման, Ջ. (10 Օգոստոս, 2018). *Ֆորբս*. Առբերված է https://www.forbes.com/sites/jeffopperman/2018/08/10/the-unexpectedly-large-impacts-of-small-hydropower/#5dbee7df7b9d-ից